

Սուրեն Ա. Մանուկյան

Պատմ. գիտ. թեկնածու

ՅԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳԻՏԱՃՅՈՒՂ

Ձևավորման և զարգացման պատմությունը*

Բանալի բառեր – ցեղասպանագիտություն, Լեմկին, Հոլոքոստի եզակիություն, համեմատական ցեղասպանագիտություն, «Ցեղասպանագետների միջազգային ընկերակցություն», Հայոց ցեղասպանություն, Ժխտողականություն:

Մուտք

Ցեղասպանագիտությունը ուսումնասիրում է ցեղասպանության և որոշ այլ զանգվածային սպանությունների, մարդկության դեմ հանցագործությունների դեպքերը միջառարկայական, կարելի է ասել նաև՝ բազմառարկայական հետազոտությունների միջոցով, որովհետև նեղ ակադեմիական առումով սա նոր գիտաճյուղ է, որը գտնվում է միաժամանակ մի քանի գիտությունների հետաքրքրությունների տիրույթում:

Թեև ցեղասպանագիտական ուսումնասիրությունները մեծապես հիմնվում են պատմական փաստերի և զարգացումների քննության վրա, «ցեղասպանություն» հասկացությունն **իրավական** եզրույթ է, որն առաջացել է կատարված ոճիրը **իրավաբանորեն** նկարագրելու անհրաժեշտությունից: Որպես քաղաքական հանցագործության ուսումնասիրություն՝ նա ենթադրում է նաև **քաղաքագիտական** տեսությունների և վերլուծական զինանոցի առկայությունը: Բացի այդ, քանի որ ցեղասպանությունն իրականացնող անձինք մարդիկ են, և այդ հանցագործությունն ինքնին սոցիալական հանցագործություն է, ապա **սոցիոլոգիան** ևս կարող է կարևոր ներդրում ունենալ ցեղասպանության ֆենոմենի բացահայտման գործում: Իսկ **սոցիալական հոգեբանությունն** օգնում է պարզել մարդկանց՝ սպանության շրջանակի մեջ ներգրավելու և ոճրագործների վերածելու պատճառները և ձևերը, ինչպես նաև պարզաբանել զոհաբանական հարցերը: **Արվեստաբանությունն** իր հեր-

* Հղվածն ընդունվել է տպագրության 20.07.2019:

թին ուսումնասիրում է այս հանցագործության արտացոլման փորձերն արվեստի տարբեր հնարքների միջոցով: **Տնտեսագիտությունը** կարող է ներգրավվել՝ հետազոտելու, թե ինչպես տնտեսական պատճառները խրախուսեցին ցեղասպանության իրագործումը ու նաև հաշվարկներ կատարել, թե ինչ նյութական կորուստներ ունեցավ զրի հասարակությունը: **Բժշկագիտությունն** ուսումնասիրում է մարդկանց առողջության վրա ցեղասպանությունների թողած երկարատև, նույնիսկ սերունդներով փոխանցվող հետևանքները:

Այս ամենը թույլ է տալիս պնդել, որ գործ ունենք բազմաշերտ, տարաբովանդակ և բազմակողմանի քննության կարոտ մի գիտաճյուղի հետ, որը ծագել ու բուռն զարգացում է ապրում վերջին տասնամյակներում:

Այս ամենով հանդերձ, ցեղասպանագիտությունն ունի ևս մեկ առանձնահատկություն: Այն ամենօրյա պրակտիկայի հետ կապ ունեցող քաղաքական ու մարդասիրական գործունեության՝ **ակտիվիզմի** դաշտ է եղել իր հիմնադրման օրվանից, և այսօր էլ այդ բաղադրիչը շատ էական է: Այս առումով ցեղասպանագետները մեծապես առնչվում են միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների, խաղաղապահների, կրոնական գործիչների, լրատվական և մշակութային դաշտի ներկայացուցիչների հետ՝ միասին խթանելով ցեղասպանության կանխարգելմանն ուղղված ջանքերը և այդ գործում ներգրավվածության իրական ծրագրերի գործադրումը¹:

1. Ռաֆայել Լեմկինը՝ առաջին ցեղասպանագետ

Ոլորտի գիտնականները գրեթե միաձայն «առաջին ցեղասպանագետ», ցեղասպանագիտության հայր² են համարում Ռաֆայել Լեմկինին՝ “genocide” «ցեղասպանություն» եզրույթի հեղինակին: 1943 թ. Ռ. Լեմկինն իր «Առանցքի պետությունների կառավարումն օկուպացված Եվրոպայում» (“Axis Rule in Occupied Europe”)³ գրքում, որը վերլուծում է նացիստական Գերմանիայի օրենքները, առաջին անգամ օգտագործեց և գիտական ու իրավական բառապաշարի մեջ ներառեց այդ եզրույթը: Սակայն Լեմկինը չմնաց միայն գիտական մշակումների ասպարեզում, այլ շարունակեց պայքարը՝ փորձելով «ցեղասպանություն» եզրույթը հանրայնացնելու և միջազգային իրավունքի ու քաղաքականության մեջ կիրառելու քայլեր ձեռնարկել: Այն ներառվեց Նյուրնբերգյան դատավարությունների մեղադրական եզրակացությունում, սակայն դատական վճռում «ցեղասպանություն» բառը բացակայում էր: Լեմկինը թեև հիասթափված էր, սակայն չհարեց գործել և նրա անխոնջ, համառ և երկարամյա աշխատանքը⁴ տվեց իր արդյունքը. 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց

1 Տե՛ս Jones A., Diffusing Genocide Studies, Defusing Genocides, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 274:

2 Տե՛ս Pioneers of Genocide Studies (ed. Totten S., Jacobs S. L.), “Transaction Publishers”, 2013, էջ 365:

3 Lemkin R., Axis Rule in Occupied Europe, Washington DC, “Carnegie Endowment for International Peace”, 1944.

4 Այս ջանքերի նկարագրության մասին տե՛ս, օրինակ, Totally Unofficial, The Autobiography of Raphael Lemkin (ed. Frieze D.-L.), New Haven & London, Yale University Press, 2013, էջ 118-219, Power S., A problem from hell: America and the age of genocide, New York, “Basic Books”, 2002, էջ 47-79:

«Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիան⁵, որի հեղինակներից մեկը և ամենամեծ լրբբիստը Ռաֆայել Լեմկինն էր:

«Ցեղասպանություն» բառը նաև կարևոր գործիք դարձավ զանգվածային սպանությունները գիտական հետազոտության օբյեկտ դարձնելու համար: Լեմկինը առաջինն էր, ով սկսեց զբաղվել ցեղասպանությունների պատմության ուսումնասիրությամբ: Նրա թղթերում պահպանվել են հին ժամանակներից մինչև մեր օրերը տեղի ունեցած տարբեր ցեղասպանական գործողություններին առնչվող տեքստեր: Դրանք պատրաստվել են, քանի որ նա ցանկանում էր կցել նման հուշագրեր ՄԱԿ-ում տարբեր երկրների ներկայացուցիչներին ուղարկվող դիմումներին⁶՝ հանցագործության էությունը ցույց տալու և առաջարկված Կոնվենցիային կողմ քվեարկելու համար: Հետագայում այդ թղթերի հիման վրա ծնվեց նրա մեկ այլ մտահղացումը՝ «Ցեղասպանությունների պատմություն» եռահատորյակի ստեղծումը:

Առաջին հատորը վերաբերվելու էր անտիկ շրջանի զանգվածային սպանություններին, մասնավորապես՝ Աստվածաշնչում հիշատակվող դեպքերին, ասորեստանյան արշավանքներին, վաղ քրիստոնյաների հետապնդումներին, հեթանոսների ոչնչացմանը, Կարթագենի դեպքին, գալլերի, կելտերի, Եգիպտոսում և Հին Հունաստանում իրագործված սպանություններին: **Երկրորդ հատորում** ամփոփվելու էին Միջնադարում հանդիպած դեպքերը՝ ալբիգոյցիների, վալդենսեաների, հրեաների, Իսպանիայի հարավում ապրող կրոնափոխ մուսուլմանների (մորիսկների), միջնադարյան Անգլիայում, Սիցիլիայում, գոթերի, հոների, մոնղոլների, վիկինգների և խաչակիրների կողմից իրականացված ցեղասպանական գործողությունները, ինչպես նաև Իսպանիայի կրոնական ինկվիզիցիան: **Երրորդ հատորը**, որը ներկայացնելու էր Նոր ժամանակները և ամենածավալունն էր լինելու, ունենալու էր հետևյալ գլուխները՝ «Աֆրիկայի տեղաբնիկների նկատմամբ գերմանացիների ցեղասպանությունը», «Ասորիներն Իրաքում», «Բելգիական Կոնգո», «Բուլղարիան թուրքերի տիրապետության տակ», «Հույների ցեղասպանությունը», «Քիոս», «Հույները ֆրանկների ենթակայության տակ», «Հույների աքսորը թուրքական նվաճումների հետևանքով», «Թուրքերի նկատմամբ հույների ցեղասպանությունը», «Գնչուների ցեղասպանությունը», «Հերերոներ», «Հաիթի», «Հոթթենտոթներ», «Հուգենոթներ», «Հունգարիան՝ թուրքերի դեմ», «Ամերիկյան հնդկացիների ցեղասպանությունը», «Իռլանդիա», «Ենիչերիների կողմից իրականացված ցեղասպանությունը», «Ճապոնացիների կողմից իրագործված կաթոլիկների ցեղասպանությունը», «Լեհական հրեաների ցեղասպանությունը», «Ռուսական հրեաների ցեղասպանությունը», «Հերերոների ցեղասպանությունը Հարավարևմտյան Աֆրիկայում», «Ռումինիայի հրեաների ցեղասպանությունը», «Կորեա», «Լատինական Ամերիկա», «Ացտեկների նկատմամբ իրականացված ցեղասպանությունը», «Յուկաթան», «Ինկերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը», «Նոր Զելանդիայում մաորի-

5 Տե՛ս Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին կոնվենցիա, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75835> (մուտք՝ 14.06.2019):

6 Տե՛ս Power S., A problem from hell: America and the age of genocide, New York, "Basic Books", 2002, էջ 54:

ների նկատմամբ իրականացված ցեղասպանությունը», «Մեննոնիտների դեմ իրագործված ցեղասպանությունը», «Նյուրբերգյան դատավարությունները», «Պարսիկներ», «Սերբեր», «Սլավոններ», «Զմյուռնիա», «Հարավային Ամերիկա», «Շտեդինգերի նկատմամբ ցեղասպանությունը», «Թասմանցիներ», «Հայեր», «Հարավարևմտյան Աֆրիկա», «Ավստրալիայի բնիկներ»⁷:

Ինչպես տեսնում ենք, Լեմկինը «ցեղասպանություն» եզրույթի չափազանց լայն կիրառման կողմնակից էր և նրա մեջ էր ներառում տարբեր դարաշրջաններում տեղի ունեցած զանգվածային սպանություններն ու էթնիկ զտումները: Այս մոտեցումը մասամբ առկա է նաև այսօր, երբ մի շարք գիտնականներ, մասնավորապես՝ Ի. Չառնին, ցեղասպանությունների մեջ են ներառում տարբեր խմբերի գրեթե բոլոր նշանակալի ոչնչացումների օրինակները⁸:

Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ գիտնականների մեծ մասի շրջանում գոյություն ունի հարաբերական փոխհամաձայնություն այն հարցի շուրջ, թե որ դեպքերը կարելի է դիտարկել իբրև ցեղասպանություն՝ ժամանակակից ըմբռնումով: Դրանք **դասական** կամ **համապարփակ (տոտալ)** ցեղասպանություններն են և ընդգրկում են 20-րդ դարի ընթացքում իրականացված չորս ցեղասպանությունները՝ Հայոց ցեղասպանությունը, հրեական Հոլոքոստը, ցեղասպանությունները Կամբոջայում և Ռուանդայում⁹: Այսպես՝ հայտնի ցեղասպանագետ **Ռոբերտ Մելսոնը** նշում է, որ Հայոց ցեղասպանությունը և Հոլոքոստը ժամանակակից աշխարհի ամենաէական, ամենադասական ցեղասպանություններն են, և դրա համար առանձնացնում է երեք պատճառ: **Նախ**՝ դրանք տոտալ ցեղասպանություններ են, որոնք ծրագրվել և իրականացվել են իբրև պետական քաղաքականություն հայերին՝ Օսմանյան կայսրությունում և հրեաներին՝ Եվրոպայում ամբողջությամբ ոչնչացնելու մտադրությամբ, ի տարբերություն շատ այլ օրինակների, երբ կոտորածները կրել են մասնակի բնույթ, և թիրախավորվել են զոհ խմբերի որոշակի հատվածներ: **Բացի այդ**՝ Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի դեպքում թիրախ խմբերը տեղական հասարակությունում ներառված, մասամբ նույնիսկ ձուլված փոքրամասնություններ էին, և նրանց ոչնչացումը կարելի է դիտել իբրև տոտալ ներքին ցեղասպանություններ, ինչը տարբերվում է այլ պետությունների քաղաքացիների նկատմամբ իրականացված գործողություններից: **Վերջապես**, և՛ հրեաները, և՛ հայերը անվիճելիորեն էթնիկ խմբեր են և ոչ թե դասակարգեր կամ քաղաքական խմբեր, որոնց ոչնչացման փաստերի ներառումը «ցեղասպանություն» բնորոշման ներքո վիճահարույց է¹⁰:

Լեմկինի թղթերում պահպանվել է մեկ այլ անտիպ աշխատության ձեռագիր «Ցեղասպանության ուսումնասիրման ներածություն» (“Introduction to the Study of

7 Մեջբերումը ըստ՝ **Jacobs S. L.**, The papers of Raphael Lemkin: A first look, “Journal of Genocide Research”, N 1 (1), 1999, էջ 113-114:

8 Տե՛ս Encyclopedia of Genocide (ed. **Charny I.W.**), “ABC-CLIO”, 2000, vol. 1:

9 Տե՛ս օրինակ **Scherrer C.L.**, Towards a theory of modern genocide. Comparative genocide research:

Definitions, criteria, typologies, cases, key elements, patterns and voids, “Journal of Genocide Research”, N 1 (1), 1999, էջ 13-23:

10 Տե՛ս **Melson R.F.**, Revolution and Genocide. On the Origins of the Armenian Genocide and the Holocaust, The University of Chicago Press, 1992, էջ 1-4, 27-29:

Genocide”) անվանումով, որտեղ, փաստորեն, առաջին անգամ հանդիպում ենք «ցեղասպանագիտություն» եզրույթին, ինչպես նաև փաստացի գործ ունենք այս գիտաճյուղում դասագրքի ստեղծման առաջին փորձի հետ: Դա 39 էջանոց մեքենագիր տեքստ է, որն անդրադարձ է կատարում երևույթի տարբեր կողմերին:

Լեմկինի ժառանգությունն ուսումնասիրող պատմաբան, պրոֆ. Ս. Ջեյքոբսի կարծիքով՝ շատ հնարավոր է, որ այն նաև կարող է նախատեսված լինել իբրև ցեղասպանությունների պատմության եռահատորի առաջաբան¹¹: Իրենց ընդգրկմամբ, նյութի ժամանակագրական շարադրանքի առումով և տեսական ընդհանրացումներով հենց այս անտիպ գործերը կարելի է համարել ցեղասպանագիտական առաջին հետազոտություններ¹²:

«Ցեղասպանությունների պատմություն» եռահատորյակը այդպես էլ չտպագրվեց, և հետաքրքիր է, որ Ռ. Լեմկինի թղթերում պահպանվել են նաև տարբեր խմբագրություններից (1955 թ. փետրվարի 16-ի նամակը՝ “The John Day Company, Inc.” և 1958 թ. օգոստոսի 19-ի նամակը՝ “Charles A. Pearce of Duell, Sloan, and Pearce, Inc. Publishers, New York”-ից) երկու նամակներ, որտեղ տեղեկացվում է, որ նրանք հրաժարվում են տպագրության ընդունել Լեմկինի աշխատությունները, քանի որ նմանաբնույթ գրքի համար դժվար թե հնարավոր լինի բավարար թվով գնորդներ գտնել:

Թեև Ռ. Լեմկինին չհաջողվեց ավարտին հասցնել ցեղասպանությունների պատմության մասին իր աշխատությունը, և որոշ գիտնականներ վերապահումով են մոտենում վերջինիս գիտական արժեքին¹³, սակայն անհերքելի է, որ նա առաջինն էր, ով սկսեց մարդկային խմբերի ծրագրված ոչնչացումը դիտարկել որպես առանձին երևույթ: Ուստի գրեթե ոչ ոք չի վիճարկում ցեղասպանագիտության ոլորտի համար Լեմկինի հիմնադիր լինելու փաստը¹⁴: Ավելին՝ նրա նվիրվածությունը թեմայի հանդեպ ոգեշնչող դարձավ հետագա շատ ցեղասպանագետների համար¹⁵:

11 Տե՛ս **Jacobs S. L.**, The papers of Raphael Lemkin: A first look, “Journal of Genocide Research”, N 1 (1), 1999, էջ 109-110, 112:

12 Իհարկե, անհրաժեշտ է նշել, որ այս երկույթի մասին ուսումնասիրություններ եղել են նաև մինչև այդ փորձը, սակայն դրանք բնականաբար չեն օգտագործել «ցեղասպանություն» եզրույթը, քանի որ այն դեռ ստեղծված չէր: Ուստի նրանց հեղինակները, օրինակ՝ Ռ. Չերչիլը երբեմն օգտագործել են «անհայտ հանցագործություն» հասկացությունը՝ դրանով կարծես կանխազգալով, որ մարդկությունը գործ ունի մի նոր և ավելի սարսափելի հանցագործության հետ:

13 Այս առումով շատ ուշագրավ է The origins of genocide: Raphael Lemkin as a historian of mass violence (ed. **Schaller D. J., Zimmerer J.**), London, New York, “Routledge”, 2009 ժողովածուն, որում խորքային վերլուծության են ենթարկվում Ռ. Լեմկինի հետազոտական մեթոդները և օգտագործած աղբյուրները:

14 Տե՛ս The origins of genocide: Raphael Lemkin as a historian of mass violence (ed. **Schaller D. J., Zimmerer J.**), London, New York, “Routledge”, 2009, **Charny I. W.**, Requiem for the Prevention of Genocide in Our Time: Working toward an Improbable Possibility but Not Giving Up, “Genocide Studies and Prevention”, N 7 (1), 2012, էջ 108–122, **Hinton A.L.**, Critical Genocide Studies, “Genocide Studies and Prevention”, N 7 (1), 2012, էջ 5:

15 Տե՛ս **Totten S., Jacobs S.L.**, Introduction, “Pioneers of Genocide Studies” (ed. **Totten S., Jacobs S.L.**), Transaction Publishers, 2013, էջ xiv, նաև **Moses A. D.**, The Field of Genocide Studies, “Genocide: Critical Concepts in Historical Studies” (ed. **Moses A.D.**), Abingdon, “Routledge”, 2010, էջ 1–23:

2. Հոլոքոստի ուսումնասիրությունն ու նրա եզակիության դրույթը

Ցեղասպանագիտության սկզբնավորման պատմությունը քննարկելիս սովորաբար այն սկսում ենք 1970-ականների վերջից մինչև 1980-ականների սկիզբն ընկած ժամանակահատվածից, երբ միաժամանակ լույս տեսան մի քանի աշխատություններ՝ հիմնարար և ուղենշային դառնալով ոլորտի համար: Խոսքը ցեղասպանագիտության՝ որպես իր տերմինաբանական համակարգով, հետազոտական մեթոդներով, ձևավորված տեսություններով առանձին գիտաճյուղի հիմնադրման, մասին է: Մակայն, անկասկած, այս կամ այլ ձևով ցեղասպանությունների պատմությանը, դրանց հետևանքներին, անդրադարձ եղել է նաև մինչև 20-րդ դարի 70-ականները:

Այսպես, թե՛ Հայոց ցեղասպանությունից, և թե՛ Հոլոքոստից հետո լույս տեսան մեծ թվով հուշագրություններ, հրապարակվեցին նաև ոճի հետ կապված բազմաթիվ փաստաթղթեր¹⁶: Դրանք մեկ ժողովրդի ողբերգության պատմության շարադրման և իմաստավորման փորձեր էին: Ցեղասպանագիտության ծագումը սերտորեն կապված է այս երկու ցեղասպանությունների և հատկապես՝ Հոլոքոստի ուսումնասիրության հետ¹⁷:

Առանձին վաղ հրատարակությունների կարելի է հանդիպել Երկրորդ աշխարհամարտի ավարտական տարում: 1945 թ. Ռիգայում լույս տեսավ Աննա Սաքսեի «Հրեաների ոչնչացումը» գիրքը¹⁸, սակայն Հոլոքոստի համակարգված ուսումնասիրությունը սկսվեց 1950-ականներին, երբ գրվեցին մի քանի կարևոր աշխատություններ հակասեմականության, նացիստների քաղաքականության պատմական, գաղափարական ակունքների և հրեա ժողովրդի ոչնչացման մասին¹⁹: Կարելի է հիշատակել Լեոն Պոլյակովի (Léon Poliakov)²⁰, Ջերալդ Ռեյթլինգերի²¹ (Gerald Reitlinger) և Ռաուլ Հիլբերգի (Raul Hilberg)²² աշխատանքները,

16 Հայոց ցեղասպանության վերաբերյալ աշխատությունները, տե՛ս, օրինակ, «Հայոց ցեղասպանություն և հայկական հարց» գրքերի մատենագիտություն (կազմ.՝ **Հարությունյան Ա.**), Էջմիածին, 2014, Հայոց ցեղասպանություն մատենագիտություն, հատոր Ա, Բ, Եր., «Գիրք», 2005, The Armenian Genocide: A Bibliography (compil. **Yeghiayan E.**), Italy, «Liberia Editrice Vaticana», 2015, Հոլոքոստի մատենագիտության համար տե՛ս, օրինակ, Encyclopedia of Holocaust Literature (ed. **Patterson D., Berger A.L., Cargas S.**), 2002, **Cargas H.J.**, The Holocaust: An Annotated Bibliography, Chicago, «American Library Association», 1985, **Drew M.**, Facing History and Ourselves Holocaust and Human Behavior: Annotated Bibliography, New York, «Walker and Company», 1988, **Edelheit A., Edelheit H.**, Bibliography on Holocaust Literature, Boulder, «Westview Press», 1986, **Szonyi D.M.**, The Holocaust: An Annotated Bibliography and Resource Guide, New York, «KTA» Publishing House, 1985: Տարբեր ցեղասպանությունների վերաբերյալ մատենագիտական հաջողված օրինակներից է First-Person Accounts of Genocidal Acts Committed in the Twentieth Century: An Annotated Bibliography (ed. **Totten S.**), Westport, «Greenwood Press», 1991:

17 Հոլոքոստի պատմագրության վերաբերյալ արժեքավոր է հետևյալ ժողովածուն՝ The Historiography of the Holocaust (ed. **Stone D.**), Basingstoke, «Palgrave Macmillan», 2004:

18 Տե՛ս Энциклопедия. Холокост на территории СССР (ред. **Альтман И.**), М., «Росспэн», 2011, էջ 358:

19 Տե՛ս **Verdeja E.**, On Situating the Study of Genocide within Political Violence, «Genocide Studies and Prevention», N 7 (1), 2012, էջ 81–88.

20 **Լեոն (Ա) Պոլյակովը** (1910 - 1997) ֆրանսիացի պատմաբան էր, մասնակցել է Դիմադրության շարժմանն ու 1944 թ. գլխավորել ժամանակակից հրեական փաստաթղթերի կենտրոնը (CDJC), որի հիմնական նպատակն էր հրեաների դեմ նացիստական հանցագործությունների ուսումնասիրությունը: Պատերազմից հետո նրան հասանելի են դառնում նաև այլ արխիվների փաստաթղթեր, և նա սկսում է զբաղվել Երկրորդ աշխարհամարտի տարիներին հրեաների ոչնչացման հետազոտությամբ: Առաջին գիրքը «Ֆրանսիական հրեաների վիճակը իտալական օկուպացիայի ժամանակ» («La condition des Juifs en France sous l'occupation italienne») լույս տեսավ 1946 թ.: Սակայն նրա կարևորագույն աշխատությունը չորս հատորանոց «Հակասեմականության պատմությունն» է («Histoire de l'antisemitisme», 1955-1968), որում ներկայացվում է հակասեմականություն երևույթի զարգացումը Քրիստոսի ժամանակներից մինչև Հիտլեր:

21 **Ջերալդ Ռեյթլինգերը** (1900 – 1978) պատմաբան էր, ով հեղինակեց Հոլոքոստի ուսումնասիրությանը նվիրված առաջին գրքերից՝ 1953 թ. «Վերջնական լուծումը» (The Final Solution, New York, «Beechurst Press», 1953), 1956 թ. «Եսես»-ը: Ազգի այլուրեցությունը» (The SS: Alibi of a Nation, London, «Heinemann», 1956): Հետաքրքիր է, որ 1932 թ. նա գրել է նաև

որոնցում փորձ արվեց ստեղծել Հոլոքոստի հիմնական պատումը, այն ներկայացնելով իբրև մեկ առանձին պատմություն՝ իր ժամանակագրությամբ և պատճառահետևանքային կապերով:

Թեմայի ուսումնասիրությանը մեծ զարկ տվեցին նաև նացիստական հանցագործ Ադոլֆ Այխմանի²³, ինչպես նաև՝ Աուշվիցի²⁴ համակենտրոնացման ճամբարի անձնակազմի նկատմամբ 1960-ական թվականներին կազմակերպված դատավարությունները և ամերիկյան հայտնի հասարակագետ Հաննա Արենդտի գրքի հրատարակությունը²⁵: Արենդտը մեկն էր այն հարյուրավոր լրագրողներից, որ եկել էին Իսրայել՝ լուսաբանելու կատարվածը և հանրահայտ դարձրին հրեաների ոչնչացման թեման: Նույնիսկ Հոլոքոստի զոհերին նվիրված Յադ Վաշեմ թանգարանի գոյությունը չէր կարողանում հանրային հետաքրքրություն ապահովել, և հրեական աղետի մասին տեղեկություններն անգամ Իսրայելի դասագրքերում էին չափազանց սուղ ներկայացված²⁶: 1967 թ. Արաբա-իսրայելական պատերազմից հետո փոխվեց նաև Հոլոքոստի հիշատակման ուղղությամբ Իսրայել պետության և հրեից Սփյուռքի ռազմավարությունը: Մշակվեցին նոր ուղերձներ, և գիտակցվեց այդ հիշողության արժեքը ազգային ինքնության և պետական շինարարության մեջ²⁷:

1970-ականներին մի շարք գիտնականներ՝ Ռանդոլֆ Բրահամը (Randolph Braham), Հարրի Կարգասը (Harry Cargas), Ջեյքոբ Ռոբինսոնը (Jacob Robinson), Յեհուդա Բաուերը (Yehuda Bauer), Ֆիլիպ Ֆրիդմանը (Philip Friedman) և Լյուսի Դավիդովիչը (Lucy Dawidowicz), բազմաթիվ աշխատանքներ տպագրեցին հրեական կյանքի և Հոլոքոստի մասին: 1980-ականներին Հոլոքոստի ուսումնասիրությունը այնքան զարգացած և բազմազան էր, որ հնարավորություն տվեց Դա-

հայերի կոտորածների մասին, երբ որպես հնագիտական պեղումներ իրականացնող խմբի անդամ գտնվում էր Մերձավոր Արևելքում և իր ճանապարհային նոթերն ամփոփեց 1932 թ. լույս տեսած «Պարկերի աշտարակ. ճանապարհորդություն Պարկաստանով և Թուրքական Հայաստանով» (A Tower of Skulls: a Journey through Persia and Turkish Armenia, London, “Duckworth”, 1932) գրքում:

22 **Ռաուլ Հիլբերգը** (1926 – 2007) ամերիկյան քաղաքագետ և պատմաբան էր, ով հեղինակեց եռահատոր «Եվրոպական հրեաների ոչնչացումը» (The Destruction of the European Jews, London, “W.H. Allen”, 1961) հայտնի աշխատությունը, որում բնութագրեց Հոլոքոստի իրականացման քաղաքական, իրավական, վարչական և կազմակերպչական մեխանիզմները: Հիլբերգը նաև Վաշինգտոնում Հոլոքոստի թանգարանի հիմնադիրներից է:

23 **Ադոլֆ Այխմանը** Երկրորդ աշխարհամարտի ընթացքում հրեաների ոչնչացման հիմնական կազմակերպիչներից մեկն էր, ով Պեդանիայի պարտությունից հետո կարողացել էր խուսափել պատասխանատվությունից և թաքնվել Արգենտինայում, որտեղ և բացահայտվում ու առևանգվում է Իսրայելի հատուկ ծառայությունների կողմից, տեղափոխվում Երուսաղեմ, որտեղ նրա նկատմամբ 1961 թ. դատավարություն է կազմակերպվում, որը ամբողջ աշխարհի ուշադրությունը և մեկ անգամ սևեռում է նացիստական հանցագործությունների վրա:

24 **Աուշվիցի դատավարությունները** տեղի ունեցան 1947 թ. Կրակովում և 1963-1965 թթ.՝ Ֆրանկֆուրտում, և կայացրեցին հարյուրավոր դատավճիռներ Աուշվից-Բիրքենաու համակենտրոնացման ճամբարում միլիոնավոր մարդկանց ոչնչացրած ռժրագործների նկատմամբ:

25 **Հաննա Արենդտը** (1906-1975) հայտնի գերմանա-ամերիկյան փիլիսոփա և քաղաքագետ էր, ով լրագրողի կարգավիճակում մասնակցեց Ա. Այխմանի՝ 1961 թ. կայացած դատավարությանը և գրեց իր հայտնի «Այխմանը Երուսաղեմում. զեկոյց չարի առօրեականության մասին» (Eichmann in Jerusalem: A Report on the Banality of Evil, New York, “Viking Press”, 1963) գիրքը, որտեղ Ա.Այխմանին բնորոշեց որպես «չարի առօրեականության» (“banality of evil”) մարմնավորում: Նա իր գրքում մի քանի անգամ կիրառում է «ցեղասպանություն» եզրույթը՝ նշելով, որ թեև հրեաներն իրենց պատմության ընթացքում բազմաթիվ ձնշումների և կոտորածների են ենթարկվել, սակայն մինչև 20-րդ դարի կեսերը չէին ենթարկվել ցեղասպանության:

26 Տե՛ս The Holocaust Encyclopedia, (ed. **Laqueur W.**), New Haven and London, Yale University Press, 2001, էջ xvi:

27 Տե՛ս **Մարդոջան Հ.**, Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները, ՊԲՀ, N 2, 2011, էջ 24-46, **Levy D., Sznajder N.**, The Holocaust and Memory in the Global Age, Philadelphia, “Temple UP”, 2006, տե՛ս նաև՝ **Moses A.D.**, The Holocaust and Genocide, “The Historiography of the Holocaust” (ed. **Stone D.**), Houndmills, “Palgrave MacMillan”, 2004, էջ 533–555:

վիդ Շոնյիին կազմել այդ թեմայով լույս տեսած գրքերի մատենագիտական ձեռնարկ²⁸: Հոլոքոստի թեման գիտական հետազոտության ոլորտ դարձավ և համաշխարհային հետաքրքրություն առաջացրեց՝ այդ առումով թերևս համեմատելի դառնալով միայն երկու աշխարհամարտերի հետ²⁹:

Միաժամանակ զարգանում էր այս երևույթի եզակիության շեշտադրումը: Այսինքն՝ Հոլոքոստն ինքնին դիտվում էր որպես մի նոր իրողություն, մարդկության պատմության մեջ իր նմանը չունեցող մի իրադարձություն, որը չէր տեղավորվում արդեն իսկ գոյություն ունեցող բնորոշումների մեջ: Նույնիսկ «ցեղասպանություն» հասկացությունը, որը Ռ. Լեմկինը ստեղծել էր բնորոշելու համար նաև Երկրորդ աշխարհամարտի ժամանակ հրեաների ոչնչացման քաղաքականությունը, «Հոլոքոստ» երևույթին չհամապատասխանող և այն ամբողջովին բնութագրելուն անընդունակ համարվեց:

Ընդ այստեղից էլ առաջ են գալիս Հոլոքոստի ուսումնասիրությունը ցեղասպանագիտության մեջ ներառելու բարդությունները: Առաջանալով անմիջապես Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո և դառնալով հասարակական անվիճելի փոխհամաձայնության արդյունք՝ Հոլոքոստի բացառիկության թեզն ամրագրվեց հանրային և առաջին հերթին՝ հրեից գիտակցության մեջ: Հրեական հեղինակ Յեհիել Դինուրը Ադոլֆ Այխմանի նկատմամբ դատավարության ժամանակ Հոլոքոստը «բոլորովին այլ մոլորակ» բնորոշեց, ինչն անմիջապես մտավ հանրային բառապաշարի մեջ³⁰՝ դառնալով Հոլոքոստի եզակիության բնորոշման խորհրդանշական արտահայտությունը:

Գիտնականները՝ Հոլոքոստի ուսումնասիրողները, ելնում էին այն աքսիոմից, որ Հոլոքոստի չափերը և էությունն այնքան առանձնահատուկ են, որ չեն կարող համեմատելի լինել ոչ մի այլ երևույթի հետ: Ավելին՝ նրանք հայտարարեցին, որ Հոլոքոստը նկարագրելու կամ հետազոտելու համար անհրաժեշտ է բացառապես մի նոր գիտաճյուղ³¹:

Եզակիության դրույթը հիմնվում էր հրեա հեղինակների այն պնդման վրա, որ Հոլոքոստի պատճառը նացիստական գաղափարախոսությունն էր և առաջնորդի՝ Հիտլերի մոլագարության հասնող անձնական ցանկությունը. մի բան, ինչը ոչ մի այլ զանգվածային ոչնչացման ընթացքում չի նկատվել³²: Այս պարագայում հակասեմականությունը դիտարկվում էր իբրև կենտրոնական դրվագ՝ Հոլոքոստն ըմբռնելու համար: Եվ քանի որ հակասեմականությունը իր պատմական արմատներով հանդերձ եզակի էր, ապա այն տարել է մի գործընթացի, որը նույնպես եզակի էր³³: Հե-

28 Տե՛ս The Holocaust: An Annotated Bibliography and Resource Guide (ed. Szonyi D.), New York, «Ktav», 1985.

29 Տե՛ս Segal R., Beyond Holocaust Studies: rethinking the Holocaust in Hungary, «Journal of Genocide Research», N 16 (1), 2014, էջ 1:

30 Տե՛ս Blatman D., Holocaust scholarship: towards a post-uniqueness era, «Journal of Genocide Research», N 17 (1), 2015, էջ 21:

31 Այս թեմայի շուրջ վաղ քննարկումները տե՛ս Rosenberg A., Silverman E., The Issue of the Holocaust as a Unique Event «Genocide in Our Time» (ed. Dobkowski M.N., Wallimann I.), Ann Arbor, University of Michigan Press, 1992, Is the Holocaust Unique? Perspectives on Comparative Genocide (ed. Rosenbaum A. S.), Boulder, «Westview Press», 1996:

32 Այստեղ պետք է նաև նկատել նրանց անտեղյակությունը՝ Հայոց ցեղասպանության պատմության, մասնավորապես՝ պանթուրքիզմի գաղափարախոսության ու երիտթուրք եռյակի՝ ճիշտ նույն անձնական հատկանիշերի վերաբերյալ:

33 Տե՛ս Blatman D., Holocaust scholarship: towards a post-uniqueness era, «Journal of Genocide Research», N 17 (1), 2015, էջ 22-23:

տագայում Հոլոքոստի եզակիությունը հիմնավորելու համար ներմուծվեցին այլ պատճառներ (սպանության աննախադեպ տեխնիկան, թիրախավորման համընդհանուր բնույթը, հրեաների փրկության բացարձակ անհնարինությունը, Հոլոքոստի աշխարհագրական տարածվածությունը, այսինքն՝ մեկ պետության տարածքից դուրս լինելու իրողությունը, հրեական մշակույթի եվրոպական քաղաքակրթության ակունքներում լինելու վարկածը և այլն):

Այս եզակիության փաստարկը նաև պատնեշներ էր ստեղծել հենց Հոլոքոստի ուսումնասիրության համար՝ խոչընդոտելով, որ այն դառնա ավելի լայն դաշտի՝ այլ ցեղասպանությունների հետ համեմատության առարկա: Ավելին՝ այն դուրս էր դրվել իր ժամանակի պատմության հետազոտությունների տրամաբանությունից³⁴:

Վերջին ժամանակներում եզակիության դրույթը որոշակի վերանայման է ենթարկվում: Այլ ցեղասպանությունները ստանում են իրենց արժանի տեղը ուսումնական ծրագրերում և հետազոտություններում, սակայն բոլոր դեպքերում «Հոլոքոստի և ցեղասպանության ուսումնասիրություն» (“Holocaust and Genocide Studies”) արտահայտությունը, որը պահպանվում է շատ ակադեմիական հաստատություններում և կենտրոններում, առաջացնում է մի կեղծ օրակարգ, ըստ որի՝ Հոլոքոստը «առավել է», քան որևէ այլ ցեղասպանություն և առանձին կարգավիճակի ճանաչման կարիք ունի³⁵:

Եզակիության դրույթին որոշակիորեն փոխարինել է «բացառիկության» դրույթը, որը, սակայն, նույնպես ենթադրում է անջատ և առանձնացված լինելու միտում³⁶: Ավելին՝ նույնիսկ Հոլոքոստի այն մասնագետները, ովքեր համաձայնում են համեմատական ուսումնասիրություններ իրականացնել, շարունակում են Հոլոքոստը դիտարկել իբրև հիմնական ձգողականության կենտրոն, իսկ այլ ցեղասպանությունների հետազոտությունը՝ որպես ստորադաս կամ ավելի երիտասարդ մի երևույթի ուսումնասիրություն³⁷:

Հոլոքոստի հայտնի ուսումնասիրող Օմեր Բարտովն այս առումով նշում է. «Այլ ցեղասպանությունները հասարակական և գիտական դաշտ եկան շնորհիվ և ոչ թե՛ ի հեճուկս Հոլոքոստի՝ որպես մեծագույն պատմական իրադարձության», և որ «Հոլոքոստն այն դեպքն էր, որը բյուրեղացրեց ցեղասպանության առավել ամբողջական սահմանումը և հիմնավորեց դրա ընկալումն իրավական դաշտում»³⁸: Բարտովի այս պնդումն, իհարկե, ունի ճշմարտության բաժին: Եթե չլիներ Երկրորդ աշխարհամարտը՝ իր զանգվածային ոչնչացման նացիստական քաղաքականությամբ, Լեմկինը կարող էր մնալ անտեսված և մոռացված մի գիտնական, և նույնիսկ «ցեղասպանություն» եզրույթը, հնարավոր է, ծնունդ չառներ: Այս առումով, իհարկե, Հոլոքոստը մեծ նշանակություն ունեցավ

34 Տե՛ս From the editor: Apologia rationalis, “Journal of Genocide Research”, N 1 (1), 1999, էջ 7-8:

35 Տե՛ս նույն տեղում, էջ 9:

36 Տե՛ս The eagles and the worms: On the future agenda of genocide studies, “Journal of Genocide Research”, N 3 (3), 2001, էջ 345:

37 Թե՛ն ժամանակային առումով «ցեղասպանություն» հասկացությունը ավելի վաղ է առաջացել, քան «Հոլոքոստը»:

38 Bartov O., Genocide and the Holocaust, p. 383, մեջբերումը ըստ՝ Moses A.D., Revisiting a Founding Assumption of Genocide Studies, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 287–300:

«ցեղասպանություն» երևույթի վրա աշխարհի ուշադրությունը սևեռելու հարցում³⁹:

Բարտովը նաև ցիտում է հայտնի ցեղասպանագետ Լեո Քուպերին, ով ընդունում էր, որ «նացիստների կողմից ժողովուրդների ոչնչացումն էր խթան հանդիսացել միջազգային իրավունքում ցեղասպանությունը որպես հանցագործություն ճանաչելու համար»⁴⁰: Այս պնդմանը, սակայն, հակադարձում էր մեկ այլ գիտնական՝ Դիրք Մոզեսը՝ նշելով, որ և՛ Լեմկինը, և՛ Քուպերը, և՛ ժամանակին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի անդամ պետությունների ներկայացուցիչները ի նկատի ունեին նացիզմի կողմից ոչնչացված բոլոր ժողովուրդներին, ոչ թե միայն հրեաներին: Առավել ևս, որ «Հոլոքոստ» տերմինը կամ նրա հոմանիշը տվյալ ժամանակահատվածում դեռ չկային, քանի որ ժամանակակիցների համար դեռ ակնհայտ չէր հրեական հարցի կենտրոնական լինելու գիտակցումը: Այլ կերպ ասած, ըստ Դ. Մոզեսի՝ «Հոլոքոստը»՝ հրեաների ցեղասպանությունը, խթան չէր «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի համար⁴¹:

Հոլոքոստի առանձնահատուկ լինելու կամ չլինելու բանավեճը, ինչպես տեսնում ենք, ունի բավական մեծ պատմություն և ներառելով մեծ թվով գիտնականների՝ ինքնին կարող է դառնալ առանձին հետազոտության նյութ:

Այս ամենի հետ մեկտեղ պետք է նշել, որ անվիճելի է Հոլոքոստի գրականության ազդեցությունն այլ ցեղասպանությունների ուսումնասիրման հարցում՝ հետազոտական ռազմավարություն և տեսական հիմնավորումներ մատակարարելու առումով⁴²: Ավելին՝ շատ ցեղասպանությունների պարագայում Հոլոքոստի ուսումնասիրությունն ընդունվում է իբրև յուրատեսակ ճանապարհային քարտեզ, մի օրինակ, որը կարելի է կիրառել նաև այլ ոճրագործությունների քննության դեպքում:

3. «Հիմնադիր հայրերը»⁴³ և ցեղասպանագիտության զարգացումը մինչև 1980-ականները

Հայտնի է, որ Հայոց ցեղասպանության մասին գրքեր սկսել են լույս տեսնել տեղի ունեցած հանցագործությունից գրեթե անմիջապես հետո: Հրատարակվում էին վերապրողների հուշեր, կազմվում էին հուշամատյաններ, հայրենակցական

39 Տե՛ս Hinton A.L., Critical Genocide Studies, “Genocide Studies and Prevention”, N 7 (1), 2012, էջ 4–15:

40 Kuper L., Genocide: Its Political Use in the Twentieth Century, New Haven, Yale University Press, 1981, p. 20, մեջբերումը ըստ՝

Moses A.D., Revisiting a Founding Assumption of Genocide Studies, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 290:

41 Տե՛ս Moses A.D., Revisiting a Founding Assumption of Genocide Studies, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 290:

42 Տե՛ս The Historiography of Genocide (ed. Stone D.), “Palgrave Macmillan”, Houndmills, 2008, էջ 2:

43 Դիրք Մոզեսը դեմ է «հիմնադիր հայրեր» բնորոշմանը՝ վերջիններին անվանելով ինքնակոչներ, ովքեր շատ քիչ ուշադրություն դարձրին Լեմկինի ժառանգությանը և փորձեցին բարելավել նրա ստեղծած հասկացությունը՝ Լեմկինի գաղափարները խոր ուսումնասիրության նյութ դարձնելու ուղղությամբ ջանքեր գործադրելու փոխարեն (Moses A.D., Lemkin, Culture, and the Concept of Genocide, “The Oxford Handbook of Genocide Studies” (ed. Bloxham D., Moses A.D.), New York, Oxford University Press, 2010): Իր հերթին Ս. Տոթթենը չի համաձայնում դրան՝ իր սեփական մեկնաբանությունը ներկայացնելով հետևյալ հոդվածում՝ “The State and Future of Genocide Studies and Prevention: An Overview and Analysis of Some Key Issues”, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 213):

միությանների ժողովածուներ, որոնց նպատակն էր կիսվել ապրածով և աշխարհին իրագեկել ողբերգության մասին: Սակայն դա կարելի է համարել ավելի շատ նյութահավաք աշխատանք, որը կոչված էր ոչ թե վերլուծելու կատարվածը և տալու դրա պատմական և իրավական գնահատականը, այլ վավերականացնելու ողբերգությունը: Եթե նույնիսկ կատարվածը ժամանակագրական ձևով, ինչ-որ մեթոդաբանությամբ շարադրելու փորձեր էին արվում, դրանք մնում էին անջատ աշխատանքներ և դուրս չէին գալիս ընթերցողների նեղ շրջանակի ուշադրությունից⁴⁴: Եվ սա հասկանալի է. դեռ չկար «ցեղասպանություն» եզրույթը, այսինքն՝ այն բառը, որը ծնունդ կտար հետազոտման կարիք ունեցող մի երևույթի: Բառի բնորոշման կարևորության մասին շատ լավ հասկանում էր Ռաֆայել Լեմկինը, ով իր նախնական կրթությամբ լեզվաբան էր:

ՄԱԿ-ի կողմից ընդունվելուց հետո, սակայն, ցեղասպանության կոնվենցիան երկար ժամանակ կիրառություն չունեցավ, քանի որ Երկրորդ աշխարհամարտից գրեթե անմիջապես հետո սկսվեց «սառը պատերազմը»: Աշխարհը երկու ճամբարի բաժանած գերտերությունները՝ ԱՄՆ-ն և ԽՍՀՄ-ը, քողարկում էին սեփական դաշնակիցների հանցանքները: Եթե զանգվածային սպանությունները տեղի էին ունեցել նրանցից մեկի հովանավորության տակ գտնվող պետությունում, ապա դրանք քննումը միջազգային հանրության կողմից և լուծումներ փնտրելուն կամ միջոցներ ձեռք առնելուն ուղղված քայլերը գրեթե անհնար էին: Օրինակ՝ Կամբոջայում ընթացող ցեղասպանությունը չէր ստանում համապատասխան գնահատական, քանի որ այդ երկրի առաջնորդների և ցեղասպանության ռճրագործների հակավիետնամական հռետորաբանությունն ու քաղաքականությունը շահավետ էր ԱՄՆ-ի համար, որը և կանխում էր միջազգային ասպարեզում Կարմիր Կիմերների դեմ ցանկացած գործողություն⁴⁵: Զարմանալի կթվա, բայց երբ 1979 թ. վիետնամական զորքերը տապալեցին Պոլ Պոտի ցեղասպանական վարչակարգը, Վիետնամը ՄԱԿ-ի կողմից քննադատության արժանացավ, և մինչև 1994 թ. Կարմիր կիմերները այդ կազմակերպության կողմից ճանաչվում էին որպես Կամբոջայի օրինական ղեկավարներ⁴⁶:

Ավելին՝ ցեղասպանության մեղադրանքը դարձել էր քարոզչական հզոր գեներ, որը «սառը պատերազմի» հակառակորդները մշտապես օգտագործում

44 Տե՛ս Կոտորածը Սալմաստուն (Ալյանատեսի պատմուածք), (կազմ. **Աազեանց Ս.**), Թիֆլիս, տպ. «Երմես», N 6, 1915, **Իշխանեան Բ.**, Աղէտի և տառապանքի աշխարհից (Այց թիւրքահայ փայտատկաններին), Թիֆլիս, տպ. Կովկասի փոխարքայի Դիւանատան, 1915, տե՛ս նաև **Արամայիս**, Զարիուրեի ոճիրը. Մուշ-Սատուն: Բեկորներ իմ յուշերից, Բագու, տպ. էլէք. Ն. Երևանցեանի, 1916, տե՛ս նաև **Սկոտչեան Ե.**, Թուրքիոյ գէիենէն: Հայ ընտանիքի մը հրաշալի փայտուտը: Ալյանատեսի պատմութիւն, Աղեքսանդրիա, տպ. «Արամ Ստեփանեան», 1918, տե՛ս նաև **Անտունեան Ա.**, Այն սկի օրերուն... (Պատկերներ), Պոսթըն, «Հայրենիք», 1919, տե՛ս նաև **Ալյունի Ս.**, Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ.Պոլիս, տպ. «Յ. Ասատուրեան որդիք», 1920, տե՛ս նաև **Պալաքեան Գ.**, Հայ գաղղոթան: Ղրուագներ հայ մարտիրոսագրութենէն: Բեռլինէն դէպի Չօր, տպ. «Միլիթարեան», 1922 (1914-1920, 1922):

45 Տե՛ս **Hinton A. L.**, Man or Monster. The trial of a Khmer Rouge Torturer, "Duke University Press", 2016, էջ 25, **Jones A.**, Genocide: A Comprehensive Introduction, London-New York, "Routledge", 2011, էջ 302.

46 Տե՛ս Pol Pot Group Wins at U.N. for 3d Year, (by **Nossiter B. D.**), New York Times, September 19, 1981, <https://www.nytimes.com/1981/09/19/world/pol-pot-group-wins-at-un-for-3d-year.html>, (մուտք՝ 14.06.2019), U.S. to Support Pol Pot Regime for U.N. Seat, by Don Oberdorfer, New York Times, September 16, 1980, https://www.washingtonpost.com/archive/politics/1980/09/16/us-to-support-pol-pot-regime-for-un-seat/58b8b124-7dd7-448f-b4f7-80231683ec57/?utm_term=.0404fe221f3e (մուտք՝ 14.06.2019):

էին մեկը մյուսի դեմ՝ այն արժեզրկելով, զրկելով լեգիտիմությունից և վերածելով պարզապես հռետորական հնարքի: ԱՄՆ-ում հաստատված արևելաեվրոպական էմիգրանտական շրջանակները մեղադրում էին ԽՍՀՄ-ին ցեղասպանության իրականացման մեջ⁴⁷՝ ստանալով նաև հենց Լեմկինի սատարումը, ով, լինելով երդվյալ հակակոմունիստ, պնդում էր, որ ԽՍՀՄ կայացումն ու հզորացումն ուղղակիորեն հենվում են զանգվածային ոչնչացումների և մշակութային ցեղասպանությունների վրա⁴⁸: Այսինքն՝ հենց ինքը՝ ցեղասպանություն եզրույթի ստեղծողը, դեմ չէր դրա քաղաքականացմանը:

Միաժամանակ՝ ԱՄՆ իշխանություններն՝ իրենք 1950-ականներին բախվեցին «Մենք մեղադրում ենք ցեղասպանությունը» (“We Charge Genocide”) գորեղ շարժման հետ⁴⁹, որը բարձրաձայնում էր այդ երկրում աֆրոամերիկացիների նկատմամբ խտրականության քաղաքականության մասին, կոչ անում այն անվանել ցեղասպանություն և ԱՄՆ-ին պատասխանատվության կանչել⁵⁰:

Քաղաքական դաշտում հանդիպած անհաղթահարելի խնդիրներից բացի ցեղասպանությունը գրեթե դուրս էր մնացել նաև ակադեմիական ոլորտից: Մոտ քառորդ դար ցեղասպանության երևույթը չէր դառնում համակարգված ուսումնասիրության առարկա:

Առաջինն այն փոքրաթիվ հեղինակներից, ով օգտագործեց նոր տերմինն իր հետազոտության մեջ, սոցիոլոգ Ջեսսի Բերնարդն (Jessie Bernard) էր: Նա իր «Ամերիկյան հասարակության վարքը» գրքի վերջին գլխում ուղղակիորեն հղում էր կատարում Լեմկինի՝ 1945 թ. լույս տեսած «Ցեղասպանություն՝ ժամանակակից հանցագործություն» (Genocide—A Modern Crime) էսսեին և պնդում, որ ռասան և էթնիկական հակամարտությունը կարող են հանգեցնել ցեղասպանության՝ վկայակոչելով 6 միլիոն հրեաների՝ Գերմանիայի կողմից իրականացված ոչնչացումը: Նա նաև անդրադառնում էր այն զինանոցին, որն օգտագործվում է ցեղասպանության ժամանակ (ծնելության նվազեցում տարբեր սեռերի մարդկանց առանձնացնելու միջոցով, խրոնիկ, մշտական թերսնում, սննդակարգում որոշ վիտամինների պակասեցում), ինչպես նաև նշում, որ ցեղասպանության նպատակը ոչ թե մարդ-

47 Տե՛ս **Curthoys A., Docker J.**, Defining Genocide, The Historiography of Genocide (ed. **Stone D.**), Houndmills, “Palgrave Macmillan”, 2008, էջ 15:

48 Տե՛ս **Weiss-Wendt A.**, Hostage of Politics: Raphael Lemkin on Soviet Genocide, “Journal of Genocide Research”, N 7 (4), 2005, էջ 551–559:

49 1951 թ. ղեկավարներին Փոլ Ռոբեսոնը (**Paul Robeson**)՝ ՄԱԿ-ի նյույորքյան գրասենյակ և Ուիլյամ Պաթերսոնը՝ (**William L. Patterson**) փարիզյան գրասենյակ համընդհանուր խնդրագիր՝ «Քաղաքացիական իրավունքների կոնգրես» կազմակերպության և այդ հանրագիրը պաշտպանող բազմաթիվ այլ մարդկանց անունից (Տե՛ս **Curthoys A., Docker J.**, Defining Genocide, The Historiography of Genocide (ed. **Stone D.**), Houndmills, “Palgrave Macmillan”, 2008, էջ 16): Այն պնդում էր, որ 1945-1951 թթ. ընթացքում իրականացված բազմաթիվ կինչի դատաստանները, ինչպես նաև մոլագար հարձակումները ռազմաձևակառուցված վերադարձող ամերիկյան սևամորթ զինվորների նկատմամբ, անհրաժեշտ է բնորոշել իբրև ցեղասպանություն՝ համաձայն ՄԱԿ-ի կողմից ընդունված կոնվենցիայի (Տե՛ս We Charge Genocide: The Historic Petition to the United Nations for Relief from a Crime of the United States Government Against the Negro People, New York, “Civil Rights Congress”, 1951, էջ 8-9, <https://archive.org/details/We-Charge-Genocide-1970> (մուտք 14.06.2019): Հանրագիրը պնդում էր, որ Միացյալ Նահանգների սևամորթ բնակչության ճնշումը «կառավարության յուրաքանչյուր ձյուղի հետևողական, գիտակցված, միասնական քաղաքականության արդյունք է» (We Charge Genocide, pp. xi–xiii, 32): ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան մերժեց հանրագրի ընդունումը, սակայն հանրային մեծ ուշադրություն ինքնին շատ կարևոր էր (Տե՛ս **Curthoys A., Docker J.**, Defining Genocide, The Historiography of Genocide (ed. **Stone D.**), Houndmills, “Palgrave Macmillan”, 2008, էջ 19):

50 Տե՛ս We Charge Genocide, էջ xii–xiii; 31, 35–36:

կանց ֆիզիկական գոյության ոչնչացումն է, այլ ոչնչացումը՝ իբրև մշակույթի կրողներ⁵¹:

Վաղ հրատարակություններից անհրաժեշտ է հիշատակել նաև հոլանդացի իրավաբան Պիթեր Դրոսթի՝ 1959 թ. լույս տեսած «Պետության հանցանքները»⁵² գիրքը, որում հեղինակը քննադատում էր ՄԱԿ-ի՝ ցեղասպանության սահմանումը և կանխատեսում, որ ցեղասպանություն իրականացրած կառավարությունները կկարողանան օգտվել կոնվենցիայի բացերից, քանի որ, ըստ կոնվենցիայի, հենց իշխանությունները պետք է պայքարեն այդ հանցագործության դեմ: Իսկ ի՞նչ անել, եթե հենց պետությունն է իր պաշտոնյաների միջոցով սեփական քաղաքացիների հանդեպ հանցագործություն իրականացնում: Դրոստն առաջարկեց վերանայել ցեղասպանության սահմանումը հետևյալով. «Ցեղասպանությունը մարդկային ֆիզիկական կյանքի կանխամտածված կործանումն է՝ որոշ հավաքականության անդամակցության պատճառաբանությամբ»⁵³:

Ամենավաղ հրատարակություններից արժանահիշատակ է նաև Իվան վան Գարսեի՝ 1970 թ. լույս տեսած «Ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների մատենագիտությունը»⁵⁴:

1967 թ. տպագրվեց Ժան-Փոլ Սարտրի «Ցեղասպանության մասին» հայտնի էսսեն, որում նա, վերլուծելով Վիետնամում ամերիկյան զորքերի կատարածը, եկավ այն եզրակացությանը, որ ԱՄՆ գործողություններն այդ երկրում կարելի է իրավաբանորեն որակել իբրև ցեղասպանություն⁵⁵:

Որոշ ժամանակ անց լրագրողները սկսեցին օգտագործել «ցեղասպանություն» եզրույթը՝ նկարագրելու համար Բանգլադեշի՝ 1971 թ. դեպքերը⁵⁶, 1975-1979 թթ. Կամբոջայում Կարմիր Կոմերների կառավարումը⁵⁷: Լույս տեսան ֆրանսիացի քաղաքագետ Ռենե Լեմարշեի (René Lemarchand)՝ ցեղասպանության մասին հեղինակած գրքերը և հոդվածները⁵⁸: Երբեմն գրքեր և հոդվածներ հրատարակվում էին այլ զանգվածային սպանությունների⁵⁹ մասին, հիմնականում՝ հուշագրություններ Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի վերաբերյալ⁶⁰: Մեծ հաշվով, սակայն, մինչև 1970-ականների վերջերը «ցեղասպանություն» եզ-

51 Տե՛ս **Bernard J.**, American Community Behavior, New York, "Holt, Reinhart and Winston", 1962 [1949], pp. 438–9 ըստ՝ **Curthoys A., Docker J.**, Defining Genocide, The Historiography of Genocide (ed. Stone D.), Houndmills, "Palgrave Macmillan", 2008, էջ 15:

52 **Drost P.N.**, The Crimes of State, Leyden, "A. W. Sythoff", 1959:

53 **Drost P.N.**, The Crimes of State, Leyden, "A. W. Sythoff", 1959.

54 **Van Garsse Y.**, A Bibliography of Genocide, Crimes against Humanity and War Crimes, Sint Niklaas Waas, Belgium, "Studiecentrum voor Kriminologie en Gerechatelyke Geneeskunde", 1970.

55 Տե՛ս <http://www.spokesmanbooks.com/Spokesman/PDF/93Sartre.pdf> (մուտք՝ 14.06.2019):

56 Բազմաթիվ մտան օրինակներ կարելի է գտնել այստեղ՝

<http://www.docstrangelove.com/2007/12/02/bangladesh-genocide-archives-foreign-newspaper-reports/> (մուտք՝ 14.06.2019):

57 Տե՛ս **Barron J., Paul A.**, Murder of a Gentle Land: The Untold Story of Communist Genocide in Cambodia, New York, "Reader's Digest Press", 1977:

58 Տե՛ս Selective genocide in Burundi (Report - Minority Rights Group; no. 20, 1974), Ethnic Genocide, "Society", N 12 (2), 1975, էջ 50–60:

59 Տե՛ս **Kennedy E.M.**, Biafra, Bengal, and Beyond: International Responsibility and Genocidal Conflict: Remarks [Comments] "American Society of International Law Proceedings", N 66, 1972, էջ 89–90:

60 Տե՛ս **Totten S.**, The State and Future of Genocide Studies and Prevention: An Overview and Analysis of Some Key Issues "Genocide Studies and Prevention", N 6 (3), էջ 212:

րույթը շատ հազվադեպ կիրառություն ուներ, և երևույթը՝ որպես համընդհանուր ֆենոմեն, գրեթե չէր ուսումնասիրվում:

Ուստի գիտաճյուղի ձևավորման մասին շարադրանքը ճիշտ կլինի սկսել 1970-1980-ականներից, երբ միաժամանակ մի քանի գիտնականներ՝ Լեո Քուպերը (Leo Kuper)⁶¹, Հելեն Ֆայնը⁶² (Helen Fein), Իսրայել Չարնին (Israel W. Charny)⁶³, Իրվինգ Լուիս Հորովիցը (Irving Louis Horowitz)⁶⁴, իսկ 1980-ականների կեսերից՝ նրանց միացած՝ Լորենց Լե Բլանը (Lawrence J. LeBlanc), Վահագն Դադրյանը (Vahakn Dadrian), Ջեք Նուսան Փորթերը (Jack Nusan Porter), Ռոջեր Սմիթը (Roger Smith), Հերբ Հիրշը (Herb Hirsch), Բարբարա Հարֆը (Barbara Harff), Էրիկ Մարկուզենը (Eric Markusen), Ֆրանք Չոքը (Frank Chalk), Կուրթ Ջոնասսոնը (Kurt Jonassohn), Հենրի Հաթենբախը (Henry Huttenbach), Իվ Թերնոնը (Yves Ternon), Սամուել Տոթենը (Samuel Totten), Ռիչարդ Հովհաննիսյանը (Richard Hovannisian) և Թոնի Բարթան (Tony Barta) փորձեցին ուսումնասիրել ցեղասպա-

61 **Լեո Քուպերը** (1908 – 23 May 1994) հարավաֆրիկացի քաղաքագետ և սոցիոլոգ էր, ով 1960-ականներից դասավանդում էր Լոս Անջելեսի Վալիֆոռնիայի համալսարանում: Նրա կարևորագույն գրքերն են «Բոլորի ողորմածությունը. ռասայական և էթնիկ փոխադարձությունների բևեռացում» (The Pity of It All: Polarization of Racial and Ethnic Relations, London, "Duckworth", 1977), «Ցեղասպանություն. նրա քաղաքական օգտագործումը XX դարում» (Genocide: Its Political Use in the Twentieth Century, New Haven, Yale University Press, 1981) և «Ցեղասպանության կանխարգելումը» (The Prevention of Genocide, New Haven, Yale University Press, 1985): Առաջին երկուսում նա ներկայացնում է մարդկանց ռասայական և էթնիկ խմբերի բևեռացման գործընթացի բացատրությունը և ցույց է տալիս, թե ինչպես է այդ գործընթացը անխուսափելիորեն բերում ոչ միայն պատերազմի, այլև զանգվածային սպանությունների, ինչպես նաև ներկայացնում է պատմության ընթացում տարբեր ցեղասպանություններ՝ փորձելով նաև դասակարգել դրանք: Քուպերը նաև «Միջազգային համաներում» ("Amnesty International") կազմակերպության նախկին ղեկավարներից մեկի՝ Մարթին Էննալիի հետ 1985 թ. ստեղծեց «Ցեղասպանությունների և կոտորածների դեմ Միջազգային տազնապ» ("International Alert Against Genocide and Massacres") կազմակերպությունը:

62 **Հելեն Ֆայնը** (1934-), ամերիկացի պատմական սոցիոլոգ է, ով երկար տարիներ գլխավորում էր Նյու Յորքում հիմնադրված «Ցեղասպանությունների ուսումնասիրման ինստիտուտը» ("Institute for the Study of Genocide" (ISG), որը այս թեմայի վրա կենտրոնացած առաջին գիտական հաստատություններից էր: Այն իրատարակում էր բավական տեղեկատվական մի լրագիր ("ISG Newsletter"), որը ոչ միայն հետևում էր տեղի ունեցող զանգվածային սպանություններին, այլ նաև ոլորտին առնչվող ուսումնասիրություններին: Հ. Ֆայնի «Ցեղասպանության հաշվառում. Հոլոքոստի ընթացքում ազգային արձագանքներ և հրեական զոհաբանություն» (Accounting for Genocide: National Responses and Jewish Victimization during the Holocaust, New York, "Free Press", 1979) գրքում վերլուծվում են Հոլոքոստի ընթացքում հրեաների ձակասագրերը՝ կախված Եվրոպայի երկրներում տարբեր կառավարությունների քաղաքականությունից և մշակութային նորոգներից, ինչպես նաև այն, թե ինչ չափով և ճանապարհով են այդ երկրները համագործակցել նացիստների հետ: Նրա հաջորդ երկու գրքերը՝ «Ցեղասպանության զոհություն» և «Ցեղասպանություն՝ սոցիոլոգիական հեռանկար» (Genocide Watch, 1992, Genocide: A Sociological Perspective, 1993), նույնպես դարձան դասական ցեղասպանագիտության համայն:

63 **Իսրայել Չարնին** (1931) իսրայելցի հոգեբան է, ով ցեղասպանությունների թեմայով իր առաջին աշխատանքը գրեց դեռ 1968 թ. «Հրեական կրթություն» ("Jewish Education") հանդեսում: Ուս «Հոլոքոստի բռնությունը դասավանդելը. մարտահրավեր կրթելու բռնության բացառում հնարավոր ապագա բռնապետների և զոհերի» ("Teaching the Violence of the Holocaust: A Challenge to Educating Potential Future Oppressors and Victims for Nonviolence") հոդվածն էր: 1978 թ. նրա խմբագրությամբ լույս է տեսնում «Հոլոքոստի ժամանակ կիրառված բռնության մասին դասավանդումը. ապագա հնարավոր բռնապետների և զոհերի հանդեպ բռնության բացառում» (Strategies against violence: design for nonviolent change, Boulder, "Westview Press", 1978) ժողովածուն, իսկ 1982 թ. նա հեղինակում է «Ինչպես կարող ենք մենք կատարել աներակայելի: Ցեղասպանություն, մարդկային քայքայել» (How Can We Commit the Unthinkable? Genocide, The Human Cancer, "Westview Press", 1982) գիրքը: Այս աշխատանքը քննում է ցեղասպանության տարբեր մասնակիցների՝ զոհերի, հանցավոր անտարբերների, հանցակիցների և ուղղորդների հոգեբանությունը: Գրքի վերջին գլխում նա առաջարկում է Ցեղասպանության վաղ ահազանգման համակարգի կիրառումը ("Genocide Early Warning System" (GEWS): Միաժամանակ նա մի քանի հաստատությունների հիմնադիր դարձավ Շամայ Ղևիտսոնի և էլի Վիզելի հետ միասին հիմնեց «Հոլոքոստի և ցեղասպանության ինստիտուտը» ("Institute on the Holocaust and Genocide" (1979), իսկ 1985 թ. նախաձեռնեց և խմբագրեց «Համացանցը Հոլոքոստի և Ցեղասպանության մասին» ("The Internet on the Holocaust and Genocide") լրաքաղը:

64 **Իրվինգ Լուիս Հորովիցը** (1929-2012) սոցիոլոգ էր, միաժամանակ "Transaction Publishers" հրատարակչության հիմնադիրը, որն առաջիններից էր, որ սկսեց ցեղասպանագիտության մասին գրքեր հրատարակել: Առավել նշանավոր է նրա «Իսլեյտվ կյանքներ. ցեղասպանություն՝ պետական իշխանություն և զանգվածային սպանություն» ("Taking Lives: Genocide: State Power and Mass Murder, New Brunswick", "Transaction", 1976) աշխատանքը, որտեղ ընդգծվում է պետական իշխանության և ցեղասպանությունների միջև գոյություն ունեցող կապը՝ քննության ենթարկելով կառավարական համակարգերը, որոնք թույլ են տալիս նախաձեռնել ցեղասպանական քաղաքականությունը և դրան տալ հանրային լեգիտիմություն:

նության երևույթը տարբեր տեսանկյուններից, ինչպես նաև այն դարձրին դասավանդման թեմա:

Երբ 1983 թ. Չիկագոյում «Ամերիկյան քաղաքագիտական համաժողովի» շրջանակներում Հերբ Հիրշը որոշեց նախաձեռնել ցեղասպանության մասին առաջին քննարկումը, հիմնական բարդություններից մեկն այն հարցն էր, թե ինչպես և որտեղ տեղավորել ծրագրում, քանի որ ոչ ոք չգիտեր՝ ինչի մասին է խոսքը⁶⁵:

Կարելի է ասել, որ ոլորտի հիմնադիրները մեծ մասամբ հրեական, որոշ չափով նաև՝ հայկական ծագում ունեին և ցեղասպանությունը հիմնականում ընկալում էին որպես սեփական ընտանիքների հետ կատարված իրադարձություն⁶⁶: Մյուսները մուտք գործեցին ոլորտ՝ ելնելով 1960-ականների քաղաքացիական իրավունքների և մարդու իրավունքների շարժումների փորձառությունից⁶⁷:

Սկզբնական շրջանում այս ուսումնասիրողները կենտրոնանում էին «ցեղասպանություն» եզրույթի վրա: Բոլորին պարզ էր, որ ՄԱԿ-ի կողմից 1948 թ. ընդունված կոնվենցիան անկատար է ու շատ բացեր ունի, և գրեթե յուրաքանչյուր գիտնական փորձում էր առաջարկել «ցեղասպանություն» երևույթի սեփական նկարագրությունը⁶⁸: Առաջին սերնդի ցեղասպանագետները կենտրոնացան նաև ցեղասպանության պատճառների, տարբեր ցեղասպանությունների պատմությունների ուսումնասիրության վրա, ինչպես նաև փորձում էին գտնել այն կանխարգելելու դեղատոմսեր⁶⁹:

Հիրավի, կարելի է պնդել, որ առանց այս մարդկանց փոքրիկ խմբի և նրանց հետզհետե միացող նորանոր գիտնականների ջանքերի՝ ցեղասպանագիտության ոլորտը կարող էր երբեք չկայանալ: Նրանք տարբեր գիտաժողովներում ներկայացնում էին ցեղասպանության թեմայով զեկույցներ, կազմակերպում այդ թեմայով առաջին գիտաժողովները և քննարկումնրը, հեղինակում առաջին գրքերը, մշակում հետազոտական մեթոդները և ստեղծում այս երևույթի ուսումնասիրությամբ զբաղվող առաջին կազմակերպություններն ու ինստիտուտները⁷⁰:

65 Տե՛ս **Hirsch H.**, Studying Genocide to Protect Life, “Pioneers of Genocide Studies”, էջ 122–123:

66 Այս առումով հետաքրքիր է այն ժողովածուն, որտեղ հենց ցեղասպանագետ գիտնականները փորձում են բացահայտել ոլորտ մուտք գործելու պատճառները (Տե՛ս “Pioneers of Genocide Studies: Confronting Mass Death in the Century of Genocide” (ed. **Totten S., Jacobs S. L.**), Westport, “Greenwood Press”, 2002):

67 Տե՛ս **Hinton A.L.**, Critical Genocide Studies, “Genocide Studies and Prevention”, N 7 (1), 2012, էջ 4–15:

68 Տե՛ս **Straus S.**, Contested Meanings and Conflicting Imperatives: A Conceptual Analysis of Genocide, “Journal of Genocide Research”, N 3 (3), 2001, էջ 349-375. Ցեղասպանություն եզրույթի մի շարք նման այլընտրանքային առաջարկներ բերված են Ադամ Ջոնսի գրքում (Տե՛ս **Jones A.**, Genocide: a comprehensive introduction, New York, “Routledge”, 2006, էջ 15-20):

69 Տե՛ս **Moses A.D.**, Lemkin, Culture, and the Concept of Genocide, “The Oxford Handbook of Genocide Studies” (ed. **Bloxham D., Moses A.D.**), New York, “Oxford University Press”, 2010, **Charny I.W.**, Requiem for the Prevention of Genocide in Our Time: Working toward an Improbable Possibility but Not Giving Up “Genocide Studies and Prevention”, N 7 (1), 2012, էջ 111:

70 Տե՛ս **Totten S.**, The State and Future of Genocide Studies and Prevention: An Overview and Analysis of Some Key Issues “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 212:

4. 1982 թ. Թեյ-Ավիվում կայացած գիտաժողովը՝ որպես շրջադարձային կետ

Յեղասպանություններն ուսումնասիրող տարբեր գիտնականների իրարից անջատ ջանքերը համախմբելու համար անգնահատելի էր Իսրայել Չարնիի՝ 1982 թ. Թեյ-Ավիվում կազմակերպած գիտաժողովը:

Գիտաժողովի կազմակերպչական աշխատանքները սկսվեցին դեռ 1979-ին: 1980 թ. ամռանը հրապարակվեց առաջին մամլո հաղորդագրությունը, իսկ 1981 թ. սկզբին տարածվեցին գիտաժողովի նկարագրությամբ 10 հազար գրքույկներ, ինչպես նաև ուղարկվեցին մասնակցելու հայտեր ներկայացնելու հրավերներ⁷¹: Հայտերի ընտրությունը կազմակերպող հանձնաժողովին դժվարին աշխատանք էր սպասում, քանի որ այն գործ ուներ մի ոլորտի հետ, որի գիտական սահմանները և չափորոշիչները հայտնի չէին, և բացի այդ՝ հայտերի թեման ոչ միայն Հուլոքստոն էր լինելու, որի մասին արդեն իսկ կար բավականին առատ գիտական գրականություն, այլ նաև այլ՝ քիչ ուսումնասիրված ցեղասպանությունները: Հայտերի ընտրության աշխատանքները գլխավորեց պատմաբան Յոշեվեդ Հովարդը (Yocheved Howard)⁷²: Հետաքրքրության բարձր մակարդակի մասին է վկայում այն, որ գիտաժողովի մեկնարկից մեկ ամիս առաջ կային 600 գրանցված մասնակիցներ⁷³:

Երբ զեկուցումներն արդեն ընտրված էին, թուրքական կառավարությունը բողոք ներկայացրեց գիտաժողովի ծրագրում հայկական կոտորածների մասին ելույթների առկայության դեմ: Չարնին, Դավիտսոնը և Վիգելը սկսեցին Իսրայելի արտաքին գործերի նախարարությունից նամակներ ստանալ՝ խորհուրդ տալով չեղարկել գիտաժողովը⁷⁴: Չարնին նշում է, որ նախարարությունն ու թուրքական պաշտոնյաները նույն «խորհրդով» այցելեցին նաև «Ամերիկյան հրեական կոմիտե» և նման հրեական մեծ կազմակերպություններ⁷⁵:

Իսրայելի պաշտոնական շրջանակները պնդում էին, որ գիտաժողովի անցկացումը կարող է վնաս հասցնել թուրք-իսրայելական հարաբերություններին: Ավելին՝ խոսվում էր, որ Թուրքիայում ապրող 18 հազար հրեաները կարող են հարվածի տակ հայտնվել⁷⁶:

Գործը հասավ նրան, որ հեռախոսազանգերի և նամակների միջոցով փորձ արվեց տարբեր երկրներից գրանցված գիտնականներին հետ պահել մասնակ-

71 Տե՛ս The book of the International Conference on the Holocaust and Genocide, book 1, “The Conference Program and Crisis” (ed. Charny I., Davison S.), Tel Aviv, 1983, էջ 11:

72 Տե՛ս նույն տեղում, էջ 11:

73 Ի. Չարնիի հետ հարցազրույցը տե՛ս Avedian V., Knowledge and Acknowledgement in the Politics of Memory of the Armenian Genocide, New York, “Routledge”, 2019, էջ 150:

74 Տե՛ս Ben Aharon E., A Unique Denial: Israel’s Foreign Policy and the Armenian Genocide, “British Journal of Middle Eastern Studies”, N 42 (4), 2015, էջ 9, մեջբերումը ըստ՝ Avedian V., Knowledge and Acknowledgement in the Politics of Memory of the Armenian Genocide, New York, “Routledge”, 2019, էջ 150:

75 Տե՛ս Avedian V., Knowledge and Acknowledgement in the Politics of Memory of the Armenian Genocide, New York, “Routledge”, 2019, էջ 150:

76 Տե՛ս Israelis Said to Oppose Parley after Threat to Turkish Jews, “New York Times”, 3 June, 1982, nytimes.com/1982/06/03/world/israelis-said-to-oppose-parley-after-threat-to-turkish-jews.html/ (մուտք՝ 14.06.2019):

ցությունից⁷⁷: Օրինակ՝ Ֆրենսիս Գիզեր Գրոսմանը նմանօրինակ զանգ էր ստացել Նյու Յորքի իսրայելական հյուպատոսարանից Իսրայել ուղևորվելուց մի քանի ժամ առաջ⁷⁸:

Սակայն կազմակերպիչները և առաջին հերթին՝ գլխավոր նախաձեռնողը՝ Իսրայել Չարնին, դիմադրեցին ճնշմանը և Հայոց ցեղասպանության թեման օրակարգում պահեցին՝ չնայած այն հանգամանքին, որ որոշ գիտնականներ, ընկրկելով ճնշմանը, չեղարկեցին իրենց մասնակցությունը գիտաժողովին: Օրինակ՝ հայտնի գրող և հասարակական գործիչ, գրականության Նոբելյան մրցանակակիր Էլի Վիզելն այդ կերպ վարվեց՝ հայտարարելով, որ մի իսրայելցի պաշտոնյայի միջոցով տեղեկացել է թուրքերի սպառնալիքների մասին, որոնք կարող էին իրականություն դառնալ, եթե հայերը մասնակցեն գիտաժողովին⁷⁹: Նա նաև փորձեց համոզել Չարնիին և Դևիսոնին կամ հետաձգել գիտաժողովը, կամ այն տեղափոխել երկրից դուրս: Իսրայել Չարնին, սակայն, միանշանակ հայտարարեց, որ գիտաժողովի չեղարկումը կամ հայկական թեմայից խուսափելը բոլորովին անթույլատրելի են⁸⁰:

Ըստ իսրայելական «Յեդիոթ Ախարանոտ» թերթի՝ գիտաժողովի մասնակիցներից շատերը պատասխանել էին, որ հրեաները, ովքեր աշխարհի լուսության զոհերն են եղել, չեն համաձայնվի լուսության նոր դավադրության մաս կազմել⁸¹: Նույն բովանդակությամբ նյութ տպագրվեց իսրայելական մեկ այլ՝ «Հարեց» թերթում, որը նշեց, որ անհնար է, որ Հայոց ցեղասպանության հերքման գործում հրեաները համագործակցեն թուրքերի հետ այն ժամանակ, երբ աշխարհը փորձում է ժխտել հրեական Հոլոքոստը՝ ընդհուպ մինչև կասկածի տակ դնելով Աուշվիցի գազային խցիկների գոյությունը⁸²:

Գիտաժողովը տեղի ունեցավ 1982 թ. հունիսի 20-24-ը⁸³ և քննարկեց ցեղասպանություններին առնչվող բազմաթիվ հարցեր: Իհարկե, Հոլոքոստի թեման գերակշռող էր, սակայն մասնակիցները կենտրոնացան հենց «ցեղասպանություն» երևույթի վրա: Սրա մասին հատուկ նշեց գիտաժողովի համակազմակերպիչներից Շամայ Դավիդսոնը⁸⁴: Քսան երկրից ժամանած մասնակիցները հանդես եկան զեկույցներով տեսական հարցերի վերաբերյալ, մասնավորապես՝ ցե-

77 Տե՛ս **Lichtenstein H.**, Broadcast Report on WDR/NDR T, West Germany, June 26, 1982, մեջբերումը ըստ՝ *The book of the International Conference on the Holocaust and Genocide*, book 1, “The Conference Program and Crisis” (ed. **Charny I., Davison S.**), Tel Aviv, 1983, p.18:

78 Տե՛ս *The New York Times*, June 22, 1982, մեջբերումը ըստ՝ *The book of the International Conference on the Holocaust and Genocide*, book 1: *The Conference Program and Crisis* (ed. **Charny I., Davison S.**), Tel Aviv, 1983, էջ 17:

79 Տե՛ս **Fisk R.**, *The Great War for Civilisation: The Conquest of the Middle East*, “Vintage”, 2007, էջ 338-339:

80 Տե՛ս *The New York Times*, June 4, 1982 cf *The book of the International Conference on the Holocaust and Genocide*, book 1, “The Conference Program and Crisis” (ed. **Charny I., Davison S.**), Tel Aviv, 1983, էջ 17: Դրան ի պատասխան՝ Է. Վիզելը հրաժարվում է գիտաժողովի համակազմակերպիչ և նախագահի պաշտոնից և ներգրավում է այլ մասնակիցների՝ հանդգելու չեղարկել իրենց մասնակցությունը: Տե՛ս **Wiesel E.**, *And the Sea is Never Full: Memoirs 1969–*, New York, “Knopf”, 1999, մեջբերումը ըստ՝ **Avedian V.**, *Knowledge and Acknowledgement in the Politics of Memory of the Armenian Genocide*, New York, “Routledge”, 2019, էջ 151:

81 Տե՛ս «Յեդիոթ Ախարանոթ», հունիսի 6, 1982 թ., մեջբերումը ըստ՝ “*The book of the International Conference on the Holocaust and Genocide*”, book 1, “The Conference Program and Crisis”, (ed. **Charny I., Davison S.**), Tel Aviv, 1983, էջ 17:

82 Տե՛ս «Հարեց», հունիսի 11, 1982, մեջբերումը ըստ՝ *The book of the International Conference on the Holocaust and Genocide*, book 1, “The Conference Program and Crisis” (ed. **Charny I., Davison S.**), Tel Aviv, 1983, էջ 17:

83 1982 հունիսի 17-18-ին՝ մինչև գիտաժողովի սկիզբն անցկացվեցին նաև սեմինարներ:

84 Տե՛ս “*Jerusalem Post*”, June 21, 1982 մեջբերումը ըստ՝ *The book of the International Conference on the Holocaust and Genocide*, book 1, “The Conference Program and Crisis”, (ed. **Charny I., Davison S.**), Tel Aviv, 1983, էջ 18:

ղասպանությունների կանխարգելման, թիրախ խմբի ներկայացուցիչների փրկության, ցեղասպանությունների կրթության, ժխտողականության, աստվածաբանության, հոգեբանության հետ առնչվող հարցերի մասին: Խոսվեց նաև այլ երկրներում և տարածաշրջաններում կատարված ոճրագործությունների մասին՝ Վիետնամ, Ուկրաինա, Տիբեթ, Խորհրդային Միության ԳՈՒԼԱԳ-ներ, Ավստրալիա: Գիտաժողովին մասնակցություն բերեցին նաև մի շարք հայ գիտնականներ (Վ. Դադրյան, Ռ. Հովհաննիսյան, Ա. Սանջյան, Մ. Հուսեփյան-Դոբկին, Ռ. Դեքմեջյան, Վ. Գուտոյան, Վ. Օշական, Ռ. Սյունի, Հ. Գրիգորյան և այլոք), ովքեր ներկայացրին Հայոց ցեղասպանության հետ առնչվող տարբեր հարցեր⁸⁵: Բացի այդ՝ բացման պլենար նիստին «Ինչո՞ւ հիշել: Տառապանքները, որպես երկու ժողովուրդների միջև կապ» վերնագրով ելույթով հանդես եկավ Երուսաղեմի հայկական պատրիարքության արքեպիսկոպոս Շահե Աճեմյանը⁸⁶, իսկ հունիսի 24-ին՝ գիտաժողովի ավարտից հետո, մասնակցներին առաջարկվեց նաև ծանոթացման այց կատարել Երուսաղեմի հայկական թաղամասով⁸⁷:

Թե որքան վիճահարույց էր նման գիտաժողովի անցկացումը, ցույց է տալիս, օրինակ, անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթման հետ կապված բարդ և խճճված պատմությունը: 1981 թ. ամռանը Նյու Յորքի «Հոլոքոստի վերապրողների հիշատակի հիմնադրամի» հիմնադիր և նախագահ Ջեք Այզները գիտաժողովի աշխատանքները կազմակերպելու համար տրամադրեց 35 հազար դոլարի դրամաշնորհ, որը, սակայն, հետագայում նվազեց՝ հասնելով 20 հազարի: Առաջին 10 հազարը ստացվեց 1982 թ. սկզբներին, իսկ մնացածը՝ հունիսին՝ հենց գիտաժողովի նախօրյակին: Սակայն այդ երկրորդ վճարումը հետագայում չեղյալ հայտարարվեց, երբ ծագեց գիտաժողովի հետ կապված ճգնաժամը⁸⁸: Գրեթե նույնանման պատմություն տեղի ունեցավ Էլի Վիզելի հետ, ով խոստացել էր միջոցներ ստանալ անձնական նվիրատվություններից և իր գլխավորած ԱՄՆ Հոլոքոստի հիշատակի խորհրդի հետ փոխկապակցված Հոլոքոստի հիշատակման հիմնադրամից: Անհատական միջոցներ չստացվեցին, սակայն 1982 թ. նա տեղեկացրեց, որ հիմնադրամը կտրամադրի 10 հազար դոլար: Այնուամենայնիվ, այս գումարները երբեք չփոխանցվեցին, քանի որ դրամաշնորհը պաշտոնապես չեղարկվել էր, երբ Էլի Վիզելը հեռացավ «ԱՄՆ Հոլոքոստի հիշատակի խորհրդի» նախագահի պաշտոնից⁸⁹:

Վերոնշյալ երկու անձն էլ նույնանման բացատրություն տվեցին: Այզները չեղարկեց իր զեկույցը, սակայն ներկա գտնվեց գիտաժողովին ոչ պաշտոնական կարգով: Այնտեղ նա հանդիպումներից մեկի ժամանակ հայտարարեց, որ որպես հրեա չի կարող մասնակցել գիտաժողովին, երբ հրեական կյանքեր են դրվում սպառնալիքի տակ, բայց որպես մարդասեր նա հավատում է, որ գիտա-

85 Ամբողջական ծրագիրը տե՛ս The book of the International Conference on the Holocaust and Genocide, book 1, “The Conference Program and Crisis”, (ed. Charny I., Davison S.), Tel Aviv, 1983, էջ 29-83:

86 Տե՛ս նույն տեղում, էջ 32:

87 Տե՛ս նույն տեղում, էջ 78:

88 Տե՛ս նույն տեղում, էջ 11-12:

89 Տե՛ս նույն տեղում, էջ 12:

ժողովի նպատակները արժեքավոր են: Իսկ էլի Վիզելը, ինչպես արդեն նշել ենք, պնդեց, որ գիտաժողովը պետք է հետաձգվի և Իսրայելից դուրս անցկացվի՝ հրեական կյանքերը վտանգի տակ չդնելու համար⁹⁰:

Գումարների սղության պատճառով սկզբում չեղարկվեց, հետագայում, սակայն, մեծ դժվարությամբ իրականացվեց զեկուցումների թեզերի տպագրությունը: Հիմնական ֆինանսավորումն ապահովվեց մասնավոր նվիրատվությունների շնորհիվ, հատկապես նշանավոր էին Կալիֆոռնիայի համալսարանի պատվավոր պրոֆեսոր Մորիս Բեքուիթի, Տրանսիլվանական համաշխարհային դաշնության և Ամերիկայի հայկական համագումարի ներդրումները, թեև վերջին դեպքում սկզբում ստացվեց միայն խոստացված գումարի քառորդը, և միայն գիտաժողովից ինն ամիս հետո՝ որոշ այլ գումարներ, որոնք, սակայն, միասին չէին հասնում խոստացվածի երեք քառորդին⁹¹:

Դժվարություններ եղան նույնիսկ հրատարակչության հետ: “Multimedia Publications Ltd” գրահրատարակչությունը սկզբում գումար էր տրամադրել գիտաժողովի զեկույցները ձայնագրելու և հետագայում սղագրելու համար: Դրա մասին նույնիսկ պայմանավորվածություն էր ձեռք բերվել Թել Ավիվում գործող մի ընկերության հետ: Սակայն հետագայում «Մուլտիմեդիա» ընկերությունը հրաժարվեց վճարել աշխատանքի դիմաց և նույնիսկ լուծարեց պայմանագիրը գիտաժողովի կազմակերպիչների հետ՝ պատճառաբանելով, որ մի քանի նշանավոր գիտնականների բացակայությունը գրքի հրատարակման նախագիծը նվազ խոստումնալից են դարձնում: Հետագայում՝ 1983 թ. հունվարին, սակայն, պայմանագիրը վերահաստատվեց⁹²:

Սակայն, Թուրքիայի խիստ հակազդեցությունը⁹³ և գիտաժողովի շուրջ ծավալված միջազգային սկանդալը նպաստեցին միջոցառման նկատմամբ հետաքրքրության աճին: Հենց այս հետաքրքրության ալիքի վրա էլ ոլորտ ներգրավվեցին նոր գիտնականներ:

Բացի նախորդ ենթաբաժնում նշված գիտնականների շրջանակից՝ մի շարք մասնագետներ սկսեցին քննության առնել կոնկրետ ցեղասպանությունները: Նրանցից կարելի է առանձնացնել Ռիչարդ Արենսին (Richard Arens) (Աչե հնդկացիների ոչնչացման ուսումնասիրություն), Ջոն Բրիջմանին (Jon Bridgman) (Հերերոների ցեղասպանություն), Ռոբերտ Կոնքվեսթին (Robert Conquest), Ջեյմս Մեյսին (James Mace) և Ռոման Սերբինին (Roman Serbyn) (Ուկրաինայում սովի պատճառով միլիոնավոր մարդկանց ոչնչացում), Քրեյգ Էչեսոնին (Craig Etcheson), Դեյվիդ Հոուքին (David Hawk) և Բեն Կիրնանին (Ben Kiernan) (Կամբոջայի ցեղասպանություն)⁹⁴:

90 Տե՛ս նույն տեղում, էջ 12:

91 Տե՛ս նույն տեղում, էջ 13:

92 Տե՛ս նույն տեղում, էջ 13-14:

93 Ըստ հետազոտող Վ. Ավետյանի՝ Թել-Ավիվում կայացած գիտաժողովը կարելի է համարել ակադեմիական դաշտում թուրքական պետական ժխտողական քաղաքականության սկզբնավորման մեկնակետ: Տե՛ս Avedian V., Knowledge and Acknowledgement in the Politics of Memory of the Armenian Genocide, New York, “Routledge”, 2019, էջ 154:

94 Տե՛ս Totten S., The State and Future of Genocide Studies and Prevention: An Overview and Analysis of Some Key Issues “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 213:

5. Ցեղասպանագիտության զարգացումը հետսառըպատերազմյան աշխարհում

1990-ականների կեսերից ցեղասպանագիտությունը բուռն զարգացում ապրեց, և դրա համար կային մի շարք պատճառներ: Սառը պատերազմի ավարտը միջազգային հանրության՝ որպես միասնական մի համակարգի կայացման վերաբերյալ մեծ հույսեր ներշնչեց: Իրաքյան գորքերը 1990 թ. օգոստոսի 2-ին գրավեցին Քուվեյթ պետությունը, ինչին հետևեց միջազգային հանրության միջամտությունը: ՄԱԿ-ը բազմաթիվ բանաձևեր ընդունեց՝ հորդորելով Սադամ Հուսեյնին դուրս բերել իր գորքերը հարևան երկրից և վերականգնել Քուվեյթի անկախությունը⁹⁵, սակայն ապարդյուն, որին ի վերջո հետևեց 1990 թ. նոյեմբերի 29-ին ընդունված 678 բանաձևը⁹⁶: Այն փաստացի վերջնագիր էր ագրեսոր պետությանը, քանի որ սպառնում էր, որ եթե Իրաքը մինչև 1991 թ. հունվարի 15-ը ամբողջովին չկատարի նախկին բանաձևերի պահանջները, ապա ՄԱԿ-ը պարտավորվում է օգտագործել անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի դադարեցնի ագրեսիան: Այս բանաձևի հիման վրա՝ ԱՄՆ-ի առաջնորդությամբ ձևավորվեց միջազգային կոալիցիա⁹⁷, որը և նախաձեռնեց «Փոթորիկն անապատում» գործողությունը, ինչի հետևանքով Քուվեյթն ազատագրվեց: Սա փաստացի ՄԱԿ-ի պատմության մեջ առաջին գործողությունն էր, որի ընթացքում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամների միջև սառը պատերազմի ավարտից հետո կոնսենսուսի հեռանկարներ նշմարվեցին. միջազգային հանրությունը համաձայնեցված ջանքերով իրականացրեց միջազգային կարգի խաթարման վերականգնումը⁹⁸: Այս ամենը հույսեր առաջացրեց, որ ի վերջո հնարավոր կլինի գործողության մեջ տեսնել նաև «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիան:

Սակայն ակնկալիքները չարդարացան: Աֆրիկայում խորհրդային ազդեցության նվազումը, Արևելյան Եվրոպայի երկրներում տեղի ունեցած «թավշյա հեղափոխությունները», ԽՍՀՄ-ի և Հարավսլավիայի փլուզումը և այդ տարածքներում նոր պետությունների ստեղծումն ի հայտ բերեցին նախկինում թաքնված բազմաթիվ հակամարտություններ, որոնք առժամանակ քողարկված էին սառըպատերազմյան տրամաբանությամբ, սակայն այժմ արդեն դուրս եկան ջրի երես: Ավելին՝ մարդկությունն ականատես եղավ նոր ցեղասպանությունների և մարդկության դեմ հանցագործությունների: 1994 թ. ապրիլ-հունիս ամիսներին Ռուանդայում հույժալ խումբն իրականացրեց փոքրամասնություն կազմող թուֆսիների ցե-

95 Տե՛ս ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1990 թ. բանաձևերը:

<https://www.un.org/Docs/scres/1990/scres90.htm> (մուտք՝ 14.06.2019):

96 Տե՛ս <https://documents-dds-ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/575/28/IMG/NR057528.pdf?OpenElement> (մուտք՝ 14.06.2019)

97 Կոալիցիոն ուժերի մեջ մտնում էին ԱՄՆ-ն, Արգենտինան, Ավստրալիան, Բահրեյնը, Բանգլադեշը, Բելգիան, Կանադան, Չեխոսլովակիան, Ղանիան, Քուվեյթը, Եգիպտոսը, Ֆրանսիան, Գերմանիան, Հունաստանը, Մարոկկոն, Նիդերլանդները, Նոր Զելանդիան, Նիգերը, Նորվեգիան, Օմանը, Պակիստանը, Կատարը, Սաուդյան Արաբիան, Սենեգալը, Սիրիան, Արաբական Միացյալ Էմիրությունները, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, Ռուսաստանը:

98 Տե՛ս Современные международные отношения и мировая политика (отв. редактор **Торкунов А.В.**), М., 2004, էջ 122:

դասպանությունը, երբ 100 օրվա ընթացքով ոչնչացվեց մոտ 800 հազար մարդ⁹⁹: Իսկ 1991-1999 թթ. Հարավսլավիայում մի քանի պատերազմի ընթացքում տեղի ունեցան պատերազմական հանցագործություններ, մարդկության դեմ հանցագործություններ, զանգվածային սպանություններ¹⁰⁰, այդ թվում նաև 1995 թ. հուլիսին Սրեբրենիցայում բոսնիացի մուսուլման տղամարդկանց ոչնչացումը, որը հետագայում որակվեց իբրև ցեղասպանական գործողություն¹⁰¹: Այս ամենն ընթանում էր միջազգային հարաբերություններում ազդեցության համար նոր պայքարի ֆոնին:

Նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի դեպքերը, նրանց ուղեկցած ցեղասպանության հանցագործությունները քննելու համար ժամանակավոր տրիբունալների ստեղծումը և ընթացող դատավարությունները, ինչպես նաև դրանց շուրջ հանրային քննարկումը նորից ուշադրության կենտրոն բերեցին «ցեղասպանություն» եզրույթը և երևույթը: 1993 թ. ստեղծվեց «Նախկին Հարավսլավիայի գործերով միջազգային քրեական դատարանը»¹⁰², իսկ 1994 թ. նոյեմբերին՝ «Ռուանդայի գործերով միջազգային քրեական դատարանը»¹⁰³, 1998 թ. ընդունվեց «Հռոմի ստատուսը» և ստեղծվեց «Միջազգային քրեական դատարանը»¹⁰⁴, որն իր աշխատանքները սկսեց 2002 թ. հուլիսի 1-ին և դարձավ առաջին միջազգային դատարանը, որն ուներ ցեղասպանության, ռազմական հանցագործությունների, մարդկության դեմ հանցագործությունների, ռազմական ագրեսիայի համար մեղադրվող անձանց պատասխանատվության կանչելու իրավասություն¹⁰⁵: Այս բոլոր փոփոխությունները ցեղասպանությունների համար պատժելու և դրանք կանխարգելելու ուղղությամբ միջազգային նոր քաղաքականության լավ ցուցիչներ էին¹⁰⁶:

Այս ընթացքում ի հայտ եկան և զարգացում ապրեցին գիտական կազմակերպությունները, թանգարանները, համալսարանական ծրագրերը, որոնք ուղղված էին ցեղասպանության հանցագործության ուսումնասիրությանը: Ստեղծվեց ցեղասպանագետների առաջին կազմակերպությունը և գիտական պարբերականը, սկսեցին անցկացվել առաջին ցեղասպանագիտական համաժողովները:

99 Ռուանդայի ցեղասպանության մասին մանրամասն տե՛ս **Des Forges A.**, *Leave None to Tell the Story: Genocide in Rwanda*, New York, “Human Rights Watch”, 1999, **Fujii L.A.**, *Killing Neighbors: Webs of Violence in Rwanda*, Ithaca, Cornell University Press”, 2009, **Hatzfeld J.**, *Machete Season: The Killers in Rwanda Speak*, New York, “Farrar, Straus & Giroux”, 2005, **Mamdani M.**, *When Victims Become Killers: Colonialism, Nativism, and the Genocide in Rwanda*, Princeton, Princeton University Press, 2001, **Melvorn L.**, *Conspiracy to Murder: The Rwanda Genocide and the International Community*, London, “Verso”, 2004:

100 Բոսնիայում տեղի ունեցած մարդկության դեմ հանցագործությունների մասին տե՛ս **Cigar N.**, *Genocide in Bosnia: The Policy of “Ethnic Cleansing.”*, “Texas A&M University Press”, 1995, **Glenny M.**, *The Fall of Yugoslavia: The Third Balkan War*, London, “Penguin”, 1996, **Macek I.**, *Sarajevo Under Siege: Anthropology in Wartime*, Philadelphia, University of Pennsylvania Press, 2009, **Sell L.**, *Slobodan Milosevic and the Destruction of Yugoslavia*, Durham, Duke University Press, 2002:

101 Տե՛ս **Rohde D.**, *Endgame: The Betrayal and Fall of Srebrenica, Europe’s Worst Massacre Since World War II*, Boulder, “Westview Press”, 1998:

102 <http://www.icty.org/> (մուտք 14.06.2019):

103 <http://unictr.irmct.org/> (մուտք 14.06.2019):

104 <https://www.icc-cpi.int/> (մուտք 14.06.2019):

105 Տե՛ս Rome Statute Of The International Criminal Court, <http://www.Preventgenocide.org /law/icc /statute/part-a.htm#2> (մուտք 14.06.2019):

106 Տե՛ս **Schaller D.J.**, *From Lemkin to Clooney: The Development and State of Genocide Studies*, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 246, **Totten S.**, *The State and Future of Genocide Studies and Prevention: An Overview and Analysis of Some Key Issues*, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 211–230, **Curthoys A.**, **Docker J.**, *Defining Genocide*, “The Historiography of Genocide” (ed. **Stone D.**), “Palgrave Macmillan”, 2008, էջ 32:

1990-ականներին ցեղասպանագիտությունը որոշակիորեն հաղթահարեց բացառապես անգլիալեզու ոլորտ լինելու խնդիրը (թեև այսօր էլ անգլերենը պահպանում է իր գերակշիռ դերը ոլորտում): Սկսեցին տպագրվել աշխատանքներ նաև այլ լեզուներով, մասնավորապես՝ սլավոնական լեզուներով (ռուսերեն, սերբո-խորվաթերեն և բոսնիերեն), իսպաներեն և պորտուգալերեն (ինչպես Ամերիկաներում, այնպես էլ Իբերական թերակղզում), ֆրանսերեն, իտալերեն, հունգարերեն, հայերեն և թուրքերեն: Ի հայտ եկած նոր սերնդի գիտնականները սկսեցին վիճարկել հիմնադիր հայրերի տեսությունները և դրույթները՝ մտնելով նրանց հետ բանավեճի մեջ¹⁰⁷: 2000-ականները բնորոշվեցին համեմատական ցեղասպանագիտության տարածումով (կարելի է հիշատակել Վ. Դադրյանի¹⁰⁸, Է. Ուեյցի¹⁰⁹, Ռ. Մելսոնի¹¹⁰, Ն. Նեյմարկի¹¹¹, Բ. Կիռնանի¹¹² և Է. Տրավերսոյի¹¹³ աշխատանքները), գիտական շրջանառության մեջ դրվեց «գաղութային ցեղասպանությունների» ուսումնասիրությունը, ցեղասպանությունների հետ մեկտեղ ավելի ակտիվորեն սկսեցին քննարկվել զանգվածային սպանություններն առհասարակ, ինչպես նաև առաջնային պլան մղվեց կանխարգելման (առաջնային նշանակություն ունեցավ Բ. Հարֆի (Barbara Harff) և Թ. Գուրրի (T. Gurr) առաջարկած վաղ ազդանշանների տեսությունը)¹¹⁴ թեման¹¹⁵:

Թեման դարձավ քաղաքականության մաս, քանի որ ցեղասպանագետները, աչքաթող անելով Ռուանդայում և Բոսնիայում կատարված հանցագործությունները, ավելի վճռական էին տրամադրված՝ իրականություն դարձնելու համար ցեղասպանությունների կանխարգելմանը վերաբերվող «այլևս երբեք» կարգախոսը: Իհարկե, չի կարելի ասել, որ տվյալ առաքելությունը հաջողությամբ պսակվեց, սակայն միաժամանակ այն զարկ տվեց մի ամբողջ համակարգի ա-

107 Տե՛ս Feierstein D., Leaving the Parental Home: An Overview of the Current State of Genocide Studies, "Genocide Studies and Prevention", N 6 (3), 2011, էջ 257–269:

108 Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի համեմատական վերլուծությունը տե՛ս Dadrian V. N., The Common Features of the Armenian and Jewish Cases of Genocide: A Comparative Victimological Approach, "Victimology: A New Focus, Violence and Its Victims" (ed. Drabkin I. and Viano E.), Lexington, "D.C. Heath", 1975, էջ 99–120, Fein H., Accounting for Genocide, Dadrian V.N., The Comparative Aspects of the Armenian and Jewish Cases of Genocide: A Sociohistorical Perspective, "Is the Holocaust Unique?" (ed. Rosenbaum A.S.), Boulder, "Westview Press", 2009, էջ 139–174, Dadrian V.N., The Historical and Legal Interconnections between the Armenian Genocide and the Jewish Holocaust: From Impunity to Retributive Justice, "Yale Journal of International Law", N 23 (2), 1998, էջ 504–59, Հայոց ցեղասպանության և Ռուանդայի ցեղասպանության համեմատական վերլուծություն մասին տե՛ս Dadrian V.N., Patterns of Twentieth Century Genocides: The Armenian, Jewish, and Rwandan Cases, "Journal of Genocide Research", N 6 (4), 2004, էջ 487–522:

109 Տե՛ս Weitz E., A Century of Genocide: Utopias or Race and Nation, Princeton, Princeton University Press, 2003, Hirsch F., Race without the Practice of Racial Politics, "Slavic Review", N 61(1), 2002, էջ 30–43:

110 Տե՛ս Melson R., Revolution and Genocide: On the Origins of the Armenian Genocide and the Holocaust, University of Chicago Press, 1992:

111 Տե՛ս Naimark N., Fires of Hatred: Ethnic Cleansing in Twentieth-Century Europe, Cambridge and London, Harvard University Press, 2001, էջ 16:

112 Տե՛ս Kiernan B., Pol Pot and Enver Pasha: a Comparison of the Cambodian and Armenian Genocides, "Studies in Comparative Genocide" (ed. Chorbajian L., Shirinian G.), New York, "St. Martin's Press", 1999, էջ 165–78, Kiernan B., Twentieth-Century Genocide: Underlying Ideological Themes from Armenia to East Timor, "The Specter of Genocide: Mass Murder in Historical Perspective" (ed. Robert Gellately, Ben Kiernan), Cambridge, Cambridge University Press, 2003, էջ 29–50:

113 Տե՛ս Traverso E., The Origins of Nazi Violence, New York, "New Press", 2003:

114 Տե՛ս Harff B., Gurr T., Toward Empirical Theory of Genocides and Politicides: Identification and Measurement of Cases Since 1945, "International Studies Quarterly", N 32 (3), 1988, էջ 359–371, Harff B., Gurr T., Systematic Early Warning of Humanitarian Emergencies "Journal of Peace Research", N 35 (5), 1998, էջ 551–79, Harff B., No Lessons Learned from the Holocaust? "American Political Science Review", N 97 (1), 2003, էջ 57–73:

115 Տե՛ս Feierstein D., Leaving the Parental Home: An Overview of the Current State of Genocide Studies, "Genocide Studies and Prevention", N 6 (3), 2011, էջ 257–269:

ռաջացմանը, որն իր մեջ միավորում էր կանխարգելման իրավական և հասարակական մեխանիզմները, ինչն առանձնապես տեսանելի դարձավ 2003 թվականից՝ Սուդանի Դարֆուր նահանգում ընթացող ցեղասպանության իրականացման դեմ պայքարելու ջանքերի օրինակով:

6. Ցեղասպանագետների «համքարությունների» ստեղծումը և ակտիվիզմի վերաբերյալ բանավեճը

Թեմայի ուսումնասիրության մեջ ներգրավված հետազոտողների թվի ավելացումն իր հետ բերեց ինքնակազմակերպվելու հրամայականը: Ցեղասպանագետներին միավորող կազմակերպություն հիմնելու գաղափարը ծնվեց 1994 թ. Բեռլինի Հումբոլդտի համալսարանում անցկացվող «Հիշել հանուն ապագայի» (“Remembering for the Future”) երկրորդ գիտաժողովի ժամանակ մի գրույցի ընթացքում, որի մասնակիցներն էին Իսրայել Չարնին, Հելեն Ֆայնը, Ռոբերտ Մելսոնը և Ռոջեր Սմիթը: Քննարկումը բերեց այն համոզմանը, որ պետք է ստեղծել ցեղասպանության բոլոր կողմերի խորը վերլուծության վրա կենտրոնացված մի կազմակերպություն:

Նույն տարում հիմնադրված «Ցեղասպանագետների ընկերակցությունը» (“The Association of Genocide Scholars” (AGS)) արդեն հաջորդ տարի կազմակերպեց իր առաջին գիտաժողովը Ուիլյամի և Մերիի քոլեջում (Ուիլյամսբուրգ, Վիրջինիա, ԱՄՆ), որին մասնակցեցին 45 գիտնականներ: Հելեն Ֆայնն ընտրվեց կազմակերպության առաջին նախագահ: Մինչև 2001-ը կոնֆերանսները բացառապես Հյուսիսային Ամերիկայում էին կազմակերպվում (Մոնրեալի Կոնկորդիա համալսարանում՝ 1997-ին, Մերիլենդի Վիսքոնսինի համալսարանում՝ 1999-ին և Միննեսոտայի համալսարանում՝ 2001-ին):

2001-ին կազմակերպության անվանն ավելացավ «միջազգային» բառը, և գիտաժողովները սկսեցին անցկացվել նաև ամերիկյան մայրցամաքից դուրս (2003-ին՝ Գելուեյի համալսարանում, Իռլանդիա, հետագայում նաև՝ Սարանդոյում, Բոսնիա, 2007-ին), իսկ 2005 թ. (Ֆլորիդայի Ատլանտյան համալսարան, Բաթոն Ռուժ) և 2009 թ. (Ջորջ Մեյսոն համալսարանում, Հարավային Վիրջինիա), հետո այլևս ԱՄՆ-ում չանցկացվեցին:

Գնալով աճում էր գիտաժողովների մասնակիցների, նաև՝ ուսանողների և երիտասարդ գիտնականների թիվը և աշխարհագրությունը: 2011 թ. Բուենոս Այրեսում կայացած գիտաժողովին մասնակցեցին արդեն 300-ից ավել հետազոտողներ, որոնք մեծապես ներկայացնում էին Լատինական Ամերիկան, ինչը վկայում էր աճող իսպանախոս գիտական համայնքի գոյության մասին: 2013-ին գիտաժողովը տեղի ունեցավ Իտալիայի Սիենայի համալսարանում, 2014-ին՝ Վիննիպեգի (Կանադա) Մանիթոբայի համալսարանում, 2015-ին գիտաժողովը Երևանում հյուրընկալեց Հայոց ցեղասպանության թանգարանը, 2017-ին՝ Բրիս-

բեյնում Քուինսլենդի համալսարանը, Ավստրալիա, իսկ 2019-ին՝ Կամբոջայում տեղակայված Ամերիկյան համալսարանը¹¹⁶:

Գիտաժողովների անցկացման աշխարհագրական բազմազանությունը և տարբեր մայրցամաքներից մասնակիցների ներգրավվածությունը ցույց էին տալիս ոլորտի զարգացման միտումը և այն հետաքրքրությունը, որ այս թեման սկսում էր վայելել տարբեր ազգությունների գիտնականների շրջանում:

«Ցեղասպանագետների միջազգային ընկերակցությունը» (IAGS) թեև ամենամեծ, սակայն միակ կազմակերպությունը չէր գիտաճյուղում: 2005 թ. Բեռլինում հիմնադրվեց մեկ այլ կազմակերպություն՝ «Ցեղասպանագետների եվրոպական ցանցը» (“European Network of Genocide Scholars”): Այս կազմակերպությունն ի հայտ եկավ առանց IAGS-ի հետ խորհրդակցությունների և սկզբնական շրջանում նախատեսում էր լինել հիմնականում եվրոպական գիտնականների միավորում: Սակայն հենց հիմնադիր ժողովում կազմակերպության հիմնադիր-նախագահ Յուրգեն Յիմերերը (Jürgen Zimmerer) առաջարկեց այն վերանվանել «Ցեղասպանագետների միջազգային ցանց» (INoGS)¹¹⁷:

Հարաբերությունները երկու կազմակերպությունների միջև երկար ժամանակ լարված էին, և նրանց անդամներին չէր հաջողվում համաձայնության եզրեր գտնել: Բացի սուբյեկտիվ խնդիրներից՝ հիմնական պատճառը կազմակերպությունների գործունեության փոխհարաբերությունն էր: «Ցեղասպանագետների միջազգային ընկերակցությունը» (IAGS) հռչակում էր, որ բացի օբյեկտիվ հետազոտությունից, ճշգրիտ վերլուծությունից ու գաղափարների մշակումից՝ գիտնականներն ունեն բարոյական պարտավորություն՝ ուղղակիորեն ներգրավվել ցեղասպանությունները կանխելու գործընթացի մեջ և դրանով պրակտիկ կիրառության մեջ դնել իրենց ներուժը: Ցեղասպանագետները նաև ժխտողականության դեմ պայքարելու պարտավորություն են կրում¹¹⁸:

Մինչդեռ «Ցեղասպանագետների միջազգային ցանցը»՝ INoGS-ը, շեշտում էր իր անդամների մաքուր ակադեմիական, ոչ քաղաքական մոտեցման կարևորությունը՝ պահպանել գիտական անաչառությունը և խուսափել այն ամենից, ինչը կարող է ընկալվել որպես քաղաքական օրակարգ¹¹⁹:

Այս ուղղության վառ ներկայացուցիչ Հենրի Հաթենբախը, քննադատելով «ակտիվիստ գիտնականներին», նշում էր, որ «Ցեղասպանագիտության հիմնական նպատակն է, իհարկե, որ քաղաքականության մշակողները օգտվեն հետազոտողների գաղափարներից: Բայց լինել ակտիվիստ նշանակում է ունենալ մտածելակերպ, որը հարիր չէ անաչառ գիտնականին: Այս երկուսը՝ հետազոտական և հասարակական քաղաքականությունը, պետք է հստակորեն իրարից

116 Տե՛ս <https://www.genocidescholars.org/iags-conferences/iags-conferences> (մուտք՝ 14.06.2019):
117 Տե՛ս Charny I. W., Requiem for the Prevention of Genocide in Our Time: Working toward an Improbable Possibility but Not Giving Up, “Genocide Studies and Prevention”, N 7 (1), 2012, էջ 108–122:
118 Տե՛ս Smith R., Markusen E., Lifton R. J., Professional Ethics and the Denial of the Armenian Genocide, “Holocaust and Genocide Studies”, N 9 (1), 1995, էջ 13:
119 Տե՛ս Theriault H., Totten S., Editors’ Introduction, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 208, <https://inogs.com/about-us/>.

տարանջատվեն: Նրանց տարալուծումը բերում է գիտնական-ակտիվիստների ի հայտ գալուն, սահուն անցմանը դեպի անպտուղ վեճերին և վստահելիության կորստին»¹²⁰:

Ընդհանրապես ակտիվ ներգրավվածության թեման, երբ գիտնականները, բացի տեսական մշակումներից, նաև ներգրավվում են քաղաքական և հանրային գործընթացների մեջ, օրինակ, համահեղինակում են կամ ստորագրում բանաձևեր, որոնք կոչ են անում միջազգային հանրությանը գործի դնել բոլոր հնարավոր միջոցները՝ ցեղասպանությունները բացառելու համար, խմբագրականներ կամ հոդվածներ են գրում ՁԼՄ-ներում կառավարական և միջազգային կազմակերպությունների գործողությունների կամ անգործության վերաբերյալ, կազմակերպում երթեր և համաժողովներ՝ ընդդեմ ցեղասպանությունների, որոշ գիտնականների կողմից դիտվում է իբրև գիտական գործունեության որակը նվազեցնող գործողություն¹²¹:

«Ցեղասպանագետների միջազգային ցանց»-ի (InoGS) անդամներն անգամ ծաղրի էին ենթարկում IAGS-ի պաշտոնական հանդեսի անվանումը՝ «Ցեղասպանագիտություն և ցեղասպանության կանխարգելում» (“Genocide Studies and Prevention”) ու մասնավորապես՝ նրա «կանխարգելում» հաստատվածը՝ քննադատելով խմբագիրներին և հեղինակներին ու պնդելով, որ կանխարգելման հավակնությունները ակտիվիզմի ձև են, ինչը գիտության հետ կապ չի կարող ունենալ¹²²:

Սակայն միաժամանակ գիտնականների հակառակ խումբը տարակուսում էր, թե ինչպես է հնարավոր աշխատել ցեղասպանագիտության ոլորտում և չփորձել ներգրավվել այս հանցագործությունը կանխելու աշխատանքներում¹²³: Բացի այդ՝ պետք է հիշել, որ հենց Լեմկինը երբեք չդիտարկեց իր գործը՝ որպես մաքուր ակադեմիական ոլորտ: Նրա գործունեությունն ամբողջությամբ ուղղված էր ապագայում նման հանցագործությունների կանխարգելմանը, մի օրակարգ, որը, գուցե ավելի իրավաբանի մասնագիտական փորձառությանը և լիբերալի լավատեսությանը, հանգեցրեց ՄԱԿ-ում ցեղասպանության կոնվենցիայի ընդունմանը բառացիորեն մեկ մարդու ջանքերի շնորհիվ¹²⁴: Այս տեսակետից պետք է համաձայնենք, որ «Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության» (IAGS-ի) աշխատանքն ամբողջովին տեղավորվում է Լեմկինի տեսլականի մեջ: Այսպես՝ կազմակերպությունը պարբերաբար հանդես է գալիս ընթացիկ զարգացումների մասին հայտարարություններով և բանաձևերով¹²⁵, նրա անդամներից շատերը ներգրավված են ցեղասպանությունների կանխարգելման տարբեր քաղաքական և հասարակական նախաձեռնություններում:

120 **Huttenbach H.**, Can Genocide Be Prevented? No! Yes? Perhaps, “Journal of Genocide Research”, N 7 (3), 2005, էջ 307–8:

121 Տե՛ս **Totten S.**, The State and Future of Genocide Studies and Prevention: An Overview and Analysis of Some Key Issues, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 223:

122 Տե՛ս նույն տեղում, էջ 224:

123 Տե՛ս նույն տեղում:

124 Տե՛ս **Levene M.**, Genocide in the Age of the Nation State, vol.1, “The Meaning of Genocide”, “I.B. Tauris”, 2005, էջ 43:

125 Տե՛ս <https://www.genocidescholars.org/resources/resolutions> (մուտք՝ 14.06.2019):

7. Ցեղասպանագիտական հանդեսները

1999 թ. հիմնադրված «Ցեղասպանության ուսումնասիրության հանդեսը» (“Journal of Genocide Research”) փաստացի դարձավ ոլորտի առաջին գիտական պարբերականը:

Դեռ 1986 թվականից տպագրվող «Հոլոքոստի և ցեղասպանության ուսումնասիրություններ» (“Holocaust and Genocide Studies”) հանդեսը հիմնականում կենտրոնացած էր Հոլոքոստի թեմային առնչվող հոդվածների վրա: Այն ԱՄՆ Հոլոքոստի հուշային թանգարանի հանդեսն է և տպագրվում է “Oxford University Press-ի”¹²⁶ կողմից: Պաշտոնական կայքում զետեղված նրա նկարագրությունը հետևյալն է. «Լինելով Հոլոքոստի և այլ ցեղասպանությունների մասին հետազոտությունների հիմնական ֆորում՝ այն ներկայացնում է սոցիալական և հումանիտար գիտությունների ոլորտի հոդվածներ, մեկնաբանություններ և գրախոսականներ: Հիմնական խնդիրն է անդրադառնալ այն հարցին, թե ինչպես է Հոլոքոստի մասին գիտելիքն առնչվում նաև այլ ցեղասպանություններին»¹²⁷:

Հանդեսի առաջին համարում ներկայացնելով դրա ստեղծման հրամայականը՝ գլխավոր խմբագիր Յեհուդա Բաուերը նշում է, որ հանդեսը լինելու է միջգիտակարգային, քանի որ ոչ մի գիտակարգ չի կարող բավարար լինել այս թեմայի ուսումնասիրության դժվարին գործը հաջողությամբ իրականացնելու համար՝ միաժամանակ շեշտելով, որ «...մենք սահմանափակել ենք մեզ հստակ սահմանված և սահմանագծված նյութի մեջ՝ Հոլոքոստի գիտական ուսումնասիրություն բոլոր բազմագիտակարգային առումներով»¹²⁸: Միաժամանակ նա նշում է, որ համաձայն վերնագրի՝ «Հոլոքոստի և ցեղասպանության ուսումնասիրություններ» հանդեսը քննարկելու է նաև ցեղասպանագիտությունն ընդհանրապես. «Մի բան պարզ է, սակայն, որ Հոլոքոստը և ցեղասպանության «այլ ձևերը» (ինչպես ավելի ճիշտ կլինի դա բնորոշել) կամ նմանատիպ բնույթ ունեն, կամ ունեն նմանատիպ հիմք, կամ բխում են նման սոցիալական, մշակութային և քաղաքական հիմքից: Հետևաբար՝ քննել մեկն առանց մյուսի, շատերիս կարծիքով, սխալ է»¹²⁹, - նշում է Յեհուդա Բաուերը: Առանձնացնելով այդ «այլ» ցեղասպանությունները՝ հատուկ շեշտվում են Հայոց ցեղասպանությունն ու Ամերիկաներում տեղաբնիկների հետ կապված խնդիրները: Սակայն նույնիսկ այս պնդումից հետո էլ կարելի է պարզորոշ նկատել, որ այլ ցեղասպանություններին բաժին հասնող հոդվածների քանակը հանդեսում միշտ անհամաչափ քիչ է եղել:

Իսկ ահա «Ցեղասպանության ուսումնասիրության հանդեսը» ուներ այլ առաքելություն, որի մասին նույնպես մանրամասն բացատրված է իր անդրամիկ համարում: Մեջ է բերվում հանդեսի նախատիպ՝ 1994 թ. հոկտեմբերից տպագրվող “The Genocide Forum” հանդեսի առաջաբանը, որտեղ քննադատելով Հոլոքոստի և ցեղասպանությունների բաժանման ավանդույթը՝ նշվում է. «Վերջին չորս

126 Առաջին երկու համարները հրատարակել է “Pergamon” հրատարակչությունը:

127 <https://academic.oup.com/hgs/pages/About> (մուտք՝ 14.06.2019):

128 Bauer Y., Editor's Introduction, “Holocaust and Genocide Studies”, N 1(1), 1986, p. 1.

129 Նույն տեղում:

տասնամյակների ընթացքում Հոլոքոստի ընկալման ջանքերը հասկանալիորեն կենտրոնացած էին գրեթե բացառապես հիտլերյան «վերջնական լուծման» վրա: Երրորդ ռայխի կողմից իրականացված այլ ցեղասպանական գործողություններին (օրինակ՝ գնչուների դեմ) ընդամենը նվազագույն և հաճախ հպանցիկ ուշադրություն էր դարձվել: Եվրոպայից դուրս գտնվող ժամանակակից իրադարձությունները, որոնք կապված չեն Երկրորդ համաշխարհային պատերազմի և գերմանական պետության ռասիստական քաղաքականության հետ (օրինակ՝ Պարագվայի Աչե հնդկացիների ճակատագիրը), շատ բարեխիղճ կերպով անտեսվել են: Իսկ երբ համեմատություններ են արվում... ապա դրանք արվում են Հոլոքոստն առանձնացնելու, այլ ոչ թե այն ավելի լայն՝ 20-րդ դարի ընդհանուր ցեղասպանության ֆենոմենի և մասնավորապես՝ էթնո-ցեղասպանության մեջ ներառելու համար»¹³⁰:

Հանդեսի մյուս, մշտապես շեշտվող առանձնահատկությունը համեմատական ուսումնասիրությունների ծիրում գործելու իրողությունն է: Երկարամյա խմբագիր Հենրի Հաթենբախը 2000 թ. համարներից մեկում նշում էր. «Հասկանալու համար ցեղասպանության իսկական նշանակությունը, հասնելու երևույթի հիմնական կոնցեպտուալ ընկալմանը՝ յուրաքանչյուր ցեղասպանական դեպք պետք է դիտարկել այլ ցեղասպանությունների հետ համեմատության մեջ: Բնորոշելու համար ցեղասպանության էությունը... պետք է կարողանալ գտնել այն ընդհանուր հայտարարը, որը միավորում է բոլոր ցեղասպանությունները, անկախ նրանից, թե որտեղ, երբ կամ ինչ ձևով են դրանք տեղի ունեցել: Եթե գիտնականները ցանկանում են տեսական դատողություններ անել ցեղասպանության մասին, ապա նրանք պետք է ընդլայնեն իրենց իմացությունը մեկ ցեղասպանության սահմաններից դուրս... Հենվել միայն մեկ ցեղասպանությունից ստացած գիտելիքի վրա նշանակում է գավառականացնել ցեղասպանագիտությունը և դատապարտել այն՝ դառնալու անջատ մենագրական հետազոտությունների մի հավաքածու»¹³¹: «Ցեղասպանության ուսումնասիրության հանդեսը» պահպանում է համամասնություն՝ տարբեր ցեղասպանությունների վերաբերյալ հետազոտությունների տպագրության միջև:

2005 թ. «Ցեղասպանության ուսումնասիրության հանդեսը» դարձավ «Ցեղասպանագետների եվրոպական (հետազայում՝ միջազգային) ցանցի» (ENOGS) պաշտոնական հանդեսը՝ 2004 թ. սեպտեմբերին ստորագրված համաձայնագրի հիման վրա¹³², թեև Իսրայել Չարնիի պնդմամբ¹³³՝ վերջինիս պաշտոնական

130 From the editor: Apologia rationalis, "Journal of Genocide Research", N 1(1), 1999, p. 7.

131 Տե՛ս From the Editor: No comparing, no thinking – the unavoidable future of studying genocide, "Journal of Genocide Research", N 2 (3), 2000, էջ 319-320:

132 Տե՛ս From the Editor: JGR finds a home!, "Journal of Genocide Research", N 6 (4), 2004, էջ 485-486:

133 Չարնին նշում է, որ ինչ-որ պահի ազդանշաններ սկսեցին գալ Հաթենբախից, որ նա ցանկանում է ինչ-որ մեկին փոխանցել հանդեսի իրատարակությունը: «Մենք IAGS-ում (Ռեբերտ Մելսոնը՝ որպես նախագահ, և ես [Իսրայել Չարնին]՝ փոխնախագահ) հետաքրքրված էինք հանդեսի ստեղծման հարցում և սկսեցինք լուրջ բանակցություններ Հաթենբախի հետ, այդ թվում՝ «Վաշինգտոնյան իրավաբանական ընկերության» ծառայությունների միջոցով, որը մի քանի ամիս աշխատեց համաձայնագրի նախագծերի վրա: Այն, ինչ տեղի ունեցավ, ցավալի էր, քանի որ պարզվեց՝ Հաթենբախն արդեն ամիսներ առաջ համաձայնագիր էր կնքել նրանց հետ, ովքեր պատրաստվում էին հայտարարել «Ցեղասպանագետների եվրոպական ցանցի» (ENOGS) ստեղծման մասին (Տե՛ս Charny I.W., Requiem

հանդեսը դառնալու վերաբերյալ նախնական պայմանավորվածություն է եղել նաև «Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության» (IAGS) հետ¹³⁴:

Այս միջադեպից հետո IAGS-ը սկսեց մտորել սեփական հանդեսի ստեղծման մասին և 2006 թ. նախաձեռնեց այն Կանադայում գործող Ջորջան ինստիտուտի հետ համագործակցությամբ՝ «Ցեղասպանագիտության և ցեղասպանությունների կանխարգելման հանդես» (“Genocide Studies and Prevention”) անվանումով:

Այս հանդեսն իր առաջաբանում նշում է, որ խրախուսում է համեմատական հետազոտությունները, կարևոր ուսումնասիրությունները, առանձին դեպքերի քննումը (case studies), ցեղասպանության, զանգվածային բռնության և մարդու իրավունքների այլ խախտումների հետ կապի մեջ, ինչպես նաև ցեղասպանության կանխարգելման և պատժի և զանգվածային բռնության ուսումնասիրությունը: Այն պարունակում է հողվածներ տարբեր գիտություններում տեղի ունեցող զարգացումների, հետազոտությունների և տեսության, ներառյալ պատմության, քաղաքագիտության, սոցիոլոգիայի, հոգեբանության, միջազգային իրավունքի, քրեական արդարադատության, կանանց, կրոնի, փիլիսոփայության, գրականության, մարդաբանության և թանգարանագիտության, տեսողական և կատարողական արվեստի և պատմության ոլորտների վերաբերյալ: Խմբագիրները իրենց ողջույնի խոսքում ավելացրել են նաև այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են կանխարգելիչ դիվանագիտությունը, հակամարտությունների կառավարումը, պատժամիջոցների և հետ-ցեղասպանական խնդիրները¹³⁵:

Իր հիմնական առաքելությունը “Genocide Studies and Prevention”-ը նկարագրում էր հետևյալ կերպ. «Հասկանալ ցեղասպանության երևույթը, իրազեկել այս շարունակական չարիքի մասին և բարձրաձայնել այն կանխարգելելու անհրաժեշտությունը ինչպես պրագմատիկ, այնպես էլ բարոյական պատճառներով: Ամսագիրը նպատակ է հետապնդում դաստիարակել, տեղեկացնել և խրախուսել գիտնականների նոր սերունդներ, ցեղասպանության վերաբերյալ հետազոտություն իրականացնել և կազմակերպել հարթակ այն մարդկանց համար, ովքեր ցանկանում են աշխատել այն կանխարգելելու ուղղությամբ»¹³⁶: Այս հանդեսը, փաստորեն, նույնպես շեշտում էր համեմատական ուսումնասիրությունների առաջնահերթությունը, ցեղասպանության ունիվերսալ, համամարդկային երևույթ լինելու և Հյուսիսային և արևմտյան Եվրոպայի իրավունքի խոսքից բացառիկության դրույթից խուսափելու ձգտումը, ինչպես նաև առանձնահատուկ կարևորություն էր տալիս ցեղասպանությունների կանխարգելմանն ուղղված ուսումնասիրություններին¹³⁷: Այս դրույթն էր, փաստորեն, որ դարձել էր ջրբաժան երկու գոյություն ունեցող ցեղասպանագիտական կազմակերպությունների միջև:

for the Prevention of Genocide in Our Time: Working toward an Improbable Possibility but Not Giving Up, “Genocide Studies and Prevention”, N 7 (1), 2012, էջ 108–122):

134 Տե՛ս նույն տեղում,

135 Տե՛ս Alvarez A., Hirsch H., Markusen E., Totten S., Editors' Introduction, “Genocide Studies and Prevention”, N 1 (1), 2006, էջ iii:

136 Charny I.W., Smith R.W., Why GSP?, “Genocide Studies and Prevention”, N 1 (1), 2006, pp. i.

137 Տե՛ս նույն տեղում:

Հանդեսի նախաձեռնողները հասկանում էին իրենց նպատակի շատ հավակնոտ լինելը և կանխարգելման ճանապարհին առանձնացնում կրթությունը և իրազեկումը¹³⁸:

Ինչպես նշվեց, սկզբնական տարիներին հանդեսը տպագրվում էր Ջորջյան ինստիտուտի հետ համագործակցությամբ “University of Toronto Press” հրատարակչությունում: Անդրանիկ համարում հանդեսի խմբագիրները նույնիսկ հատուկ շնորհակալություն են հայտնել Ջորջյան ինստիտուտի ստորաբաժանում հանդիսացող «Ցեղասպանագիտության և մարդու իրավունքների միջազգային ինստիտուտի» նախագահ Գրեգ Սարգսյանին և գործադիր տնօրեն Ջորջ Շիրինյանին՝ նշելով, որ առանց նրանց օժանդակության և քաջալերման՝ հանդեսը մնալու էր ընդամենը գաղափար և չէր ստանալու ֆիզիկական իրագործում¹³⁹:

Այս առումով ավելի զարմանալի էր, որ 2014 թ. մարտին հանդեսը փաստացի կիսվեց: IAGS-ը մեկ տարի դադարից հետո շարունակեց հրատարակել “Genocide Studies and Prevention”-ը՝ տեղափոխելով այն Հարավային Ֆլորիդայի համալսարանի հրատարակչություն և դարձնելով բացառապես համացանցային և բաց հասանելի բոլոր ընթերցողների համար, իսկ Ջորջյան ինստիտուտը հիմնադրեց նոր հանդես “Genocide Studies International” անվանումով՝ պահպանելով և՛ հրատարակչին և՛ նույնիսկ հին հանդեսի շապիկի ձևավորումը: Կանխարգելման կարևորության հետ մեկտեղ նոր հանդեսը շեշտը դրեց նաև մարդու իրավունքների պաշտպանության վրա¹⁴⁰:

Բացի այս չորս հիմնական հանդեսներից՝ ցեղասպանությունների մասին հոդվածներ տպագրվում են նաև մի շարք այլ հանդեսներում՝ «Նախապաշարման ձևեր» (“Patterns of Prejudice”), «Մարդկային մնացորդները և բռնություն» (“Human Remains and Violence”), «Ոճրագործների ուսումնասիրման հանդես» (“Journal of Perpetrator Studies”), «Մարդու իրավունքների քննություն» (“Human Rights Review”) և այլն:

Այլալեզու հանդեսների թվում կարելի է նշել գերմաներեն «Ցեղասպանության հետազոտության ամսագիր» (“Zeitschrift für Genozidforschung”) (լույս է տեսնում 1999-ից), իսպաներեն «Ցեղասպանության ուսումնասիրության արգենտինյան հանդես» (“Argentine Revista de Estudios sobre Genocidio”, 2007-ից) հանդեսները և հայերեն տպագրվող «Ցեղասպանագիտական հանդես»-ը (2013-ից):

8. Ցեղասպանագիտության ինստիտուցիոնալ համակարգը

Վերջին երկու տասնամյակների ընթացքում ցեղասպանագիտության դաշտը ընդլայնվել և ինստիտուցիոնալացվել է: Ստեղծվել են մշտական գործող հաս-

138 Տե՛ս նույն տեղում:

139 Տե՛ս Alvarez A., Hirsch H., Markusen E., Totten S., Editors' Introduction “Genocide Studies and Prevention”, N 1 (1), 2006, էջ iii:

140 Տե՛ս <https://www.utpjournals.press/journals/gsi/scope> (մուտք՝ 14.06.2019):

տատություններ, որոնք ցեղասպանությունների ուսումնասիրությունը դարձրել են իրենց գործունեության հիմնական ձևերից մեկը:

Բուն զարգացում է ապրում գրահրատարակչությունը: Եթե 1980-ականներին հազվադեպ էին հեղինակվում գրքեր, որոնց վերնագրում կարելի էր հանդիպել «ցեղասպանություն» բառը, և դրանք հիմնականում տպագրվում էին փոքր հրատարակչություններում, ապա 1990-ականներից իրավիճակը փոխվեց, և հարյուրավոր գրքեր լրացրել են մասնագիտական գրադարանը, ուստի այժմ դրանք մեծ հրատարակչական տների ուշադրության կենտրոնում են: Օրինակ՝ աշխարհահռչակ «Routledge» հրատարակչությունը 2013-ից սկսել է մի շարք նվիրված ցեղասպանությունների և մարդկության դեմ հանցագործությունների ուսումնասիրության վերաբերյալ գրքերի հրատարակմանը¹⁴¹: Առանձնահատուկ պետք է նշել մի քանի հանրագիտարանների գոյությունը, որոնք փորձում են ամփոփել գիտաճյուղում կուտակված գիտելիքները¹⁴², ինչպես նաև հայտնի «Յեղասպանության դարաշրջան. կարևոր ակնարկներ և ականատեսների վկայություններ» («Century of Genocide: Critical Essays and Eyewitness Testimony») (1995, 1997, 2004, 2009) ժողովածուները¹⁴³ և «Յեղասպանություն. քննական մատենագիտական վերլուծություն» («Genocide: A Critical Bibliographic Review», vol. 1–4 (London: Mansell, New Brunswick, NJ: Transaction, 1988–2003); **Samuel Totten**, ed., Genocide: A Critical Bibliographic Review, vol. 5–9 (New Brunswick, NJ: Transaction, 2005–2012) մատենագիտական շարքը:

1980-1990-ականներին սկսում են ստեղծվել ցեղասպանագիտական ուսումնասիրություններով զբաղվող հատուկ կենտրոններ:

Նման առաջին հաստատություն թերևս կարելի է համարել Նյու Յորքում 1982 թ. Քրեական իրավունքի Ջոն Ջեյ քոլեջում հիմնադրված «Յեղասպանության ուսումնասիրության ինստիտուտը» («Institute for the Study of Genocide»): Թեև այն չկարողացավ միջոցներ հայթայթել աշխատանքի համար¹⁴⁴, սակայն հետագայում մի քանի հասցե փոխելով՝ գործում է առ այսօր և կենտրոնական դեր է ունեցել ոլորտի զարգացման համար¹⁴⁵: Նույն շրջանում Իսրայել Չարնին Երուսաղեմում հիմնադրում է «Հոլոքոստի և ցեղասպանությունների ինստիտուտը» («Institute on the Holocaust and Genocide»)¹⁴⁶: Արդեն 1986 թ. նրան միացավ «Մոնրեալի ցեղասպանագիտության և մարդու իրավունքի ինստիտուտը» («Montreal Institute for Genocide and Human Rights Studies»)¹⁴⁷, որը Ֆ. Չոքի և Ջո-

141 Տե՛ս Routledge Studies in Genocide and Crimes against Humanity, <https://www.routledge.com/Routledge-Studies-in-Genocide-and-Crimes-against-Humanity/book-series/RSGCH> (մուտք 14.06.2019):

142 Տե՛ս Encyclopedia of Genocide (ed. **Charny I.W.**), «ABC-CLIO», 2000, Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity (ed. **Shelton D.**), Detroit, «Macmillan», 2005, The Dictionary of Genocide (ed. **Totten S., Bartrop P.**), Westport, «Greenwood Press», 2008, The Oxford Handbook of Genocide Studies (ed. **Bloxham D., Moses A.D.**), Oxford, Oxford University Press, 2010: Գոյություն ունի նաև մշտապես թարմացվող առցանց հանրագիտարան Online Encyclopedia on Mass Violence, www.massviolence.org (մուտք 14.06.2019):

143 Տե՛ս Century of Genocide: Critical Essays and Eyewitness Testimony (ed. **Totten S., Parsons W.**), New York, «Garland», 1995, 1997, New York, «Routledge», 2004, 2009):

144 Տե՛ս **Fein H.**, From Social Action to Social Theory and Back: Paths and Circles, «Pioneers of Genocide Studies», էջ 228:

145 Տե՛ս <http://studyofgenocide.org/> (մուտք 14.06.2019)

146 Տե՛ս <http://www.ihgijm.com/> (մուտք 14.06.2019):

147 Տե՛ս <https://www.concordia.ca/research/migs.html> (մուտք 14.06.2019):

նաստնի Կոնկորդիա համալսարանում ցեղասպանություններին նվիրված դասընթացի տրամաբանական շարունակությունն էր¹⁴⁸:

Ավստրալիայում նման հաստատություն՝ «Համեմատական ցեղասպանագիտության կենտրոնը», հիմնադրվեց 1993 թ. Մաքուեյր համալսարանում՝ Սիդնեյում, հետագայում այն վերանվանվեց «Հոլոքոստի և ցեղասպանությունների ուսումնասիրության ինստիտուտ» և վերածվեց անկախ կրթական միավորի: Եվրոպայում նմանատիպ առաջին հաստատությունը 1994 թ. Բոխումի Ռուրի համալսարանում հիմնադրված «Սիյուռքագիտության և ցեղասպանագիտության ինստիտուտն» է¹⁴⁹: Այն գլխավորում է հայազգի Միհրան Դաբաղը և հրատարակում է “Zeitschrift für Genozidforschung”¹⁵⁰ գիտական հանդեսը¹⁵¹: 1992 թ. Սարաևոյի համալսարանում սկսեց գործել «Մարդկության դեմ հանցագործությունների և միջազգային իրավունքի ուսումնասիրության ինստիտուտը»¹⁵², որը նույնպես որոշ չափով կենտրոնանում էր ցեղասպանությունների ուսումնասիրության վրա:

1995 թ. ձևավորվեց «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը»¹⁵³, որը Մեծ եղեռնի վերաբերյալ նյութերի կուտակման և հետազոտական աշխատանքների իրականացման, ինչպես նաև թեմայի վերաբերյալ եզակի թանգարանի՝ գիտական ցուցադրության սպասարկման համար կենտրոնական տեղ դարձավ:

Դեռ 1981 թ. Յելի համալսարանում Գ. Սթենթոնի և Բ. Կիրնանի ջանքերով հիմնադրված «Կամբոջայի ցեղասպանության նախագիծը»,¹⁵⁴ ստանալով ԱՄՆ կառավարության ֆինանսավորումը, 1994 թ. վերափոխվեց «Յեղասպանագիտության կենտրոնի», իսկ 1998 թ.՝ «Յեղասպանագիտության ծրագրի»¹⁵⁵:

Արժանի են հիշատակման նաև Ուփսալայի «Հոլոքոստի և ցեղասպանագիտության ծրագիրը» (1998)¹⁵⁶, «Հոլոքոստի և ցեղասպանությունների ուսումնասիրության ավստրալական ինստիտուտը» (1999)¹⁵⁷, Ռաթգերսի համալսարանի «Յեղասպանագիտության և մարդու իրավունքների կենտրոնը»,¹⁵⁸ Քուինսլենդի համալսարանի «Պաշտպանելու պարտավորության Ասիա-խաղաղօվկիանոսյան կենտրոնը»¹⁵⁹ և այլ հաստատություններ: Նման կենտրոնները հետզհետե ավելանում են ամբողջ աշխարհով մեկ հետազոտությունների իրականացման, մեծագրությունների, զեկույցների հրապարակման և տարածման, արխիվների

148 Տե՛ս Weiss-Wendt A., Problems in Comparative Genocide Scholarship, “The Historiography of Genocide” (ed. Stone D.), “Palgrave Macmillan”, 2008, էջ 57:

149 Տե՛ս <http://www.idg.ruhr-uni-bochum.de/index.html.en> (մուտք 14.06.2019):

150 Տե՛ս <http://www.idg.ruhr-uni-bochum.de/publikationen/zfg.html.de> (մուտք 14.06.2019):

151 Տե՛ս Weiss-Wendt A., Problems in Comparative Genocide Scholarship, “The Historiography of Genocide” (ed. Stone D.), “Palgrave Macmillan”, 2008, էջ 58:

152 Տե՛ս <http://www.institut-genocid.unsa.ba/bs/> (մուտք 14.06.2019):

153 Տե՛ս <http://www.genocide-museum.am> (մուտք 14.06.2019):

154 Տե՛ս <https://gsp.yale.edu/case-studies/cambodian-genocide-program> (մուտք 14.06.2019):

155 Տե՛ս <https://gsp.yale.edu/> (մուտք 14.06.2019)

156 Տե՛ս <http://www.uu.se/en/admissions/master/selma/program/?pKod=HFF2M> (մուտք 14.06.2019):

157 Տե՛ս <http://aihgs.org/index.php/en/> (մուտք 14.06.2019):

158 Տե՛ս <http://cghr.newark.rutgers.edu/index.html> (մուտք 14.06.2019):

159 Տե՛ս <http://www.r2pasiapacific.org> (մուտք 14.06.2019):

ստեղծման, ցեղասպանության վերաբերյալ տարբեր համալսարանական դասընթացների մշակման և դասավանդման հիմնական գործառնություններով¹⁶⁰:

Գնալով ավելի շատ համալսարաններ են առաջարկում ցեղասպանագիտության դասավանդման ծրագրեր, որոնք բավականին մեծ հետաքրքրություն են վայելում ուսանողության շրջանում: Առաջին ծրագրերն ի հայտ եկան 1980-ականների սկզբին (Հենրի Հաթենբախի ծրագիրը Նյու Յորքի քաղաքային համալսարանում (City University of New York), Ջոյս Ապսելինը՝ Նյու Յորքի պետական համալսարանում՝ (State University of New York), և Ջոնասսոնի և Չոքի դասընթացը Կոնկորդիա համալսարանում՝ (Concordia University)¹⁶¹:

Այսօր հիմնականում առաջարկվում է ցեղասպանագիտության մագիստրոսի կոչում, որոշ մասը նաև՝ Հոլոքոստի, ինչպես նաև մարդու իրավունքների մասնագիտությամբ: Կարելի է առանձնացնել Քին համալսարանը (Kean University), Նյու Ջերսի, ԱՄՆ, Նյու Ջերսիի Ռիչարդ Սթոքտոնի քոլեջը (Richard Stockton College of New Jersey), Լոնդոնի Քինգսթոն համալսարանը (Kingston University), Վլադրինա եվրոպական համալսարանը Ֆրանկֆուրտում (European University Viadrina), Ամստերդամի համալսարանը (University of Amsterdam), Ուփսալայի համալսարանը (Uppsala University), Ռաթգերսի համալսարանը (Rutgers University), Ռուանդայի ազգային համալսարանը (National University of Rwanda), Երևանի պետական համալսարանը: 1998 թ. ԱՄՆ Քլարքի համալսարանում (Clark University) հիմնադրվեց նաև Հոլոքոստի և ցեղասպանությունների ուսումնասիրության թեկնածուական աստիճան շնորհող առաջին ծրագիրը:

Ցեղասպանությունների թեման նաև արծարծվում է տարբեր ամառային դասընթացների ընթացքում, որոնցից կարելի է առանձնացնել ԱՄՆ Քին քոլեջում գործող «Ցեղասպանության կանխարգելման ծրագիրը»¹⁶², Տրոնտոյում Ջորյան ինստիտուտի կողմից առաջարկվող «Ցեղասպանությունների և մարդու իրավունքների ամառային դպրոցի դասընթացները»¹⁶³ և Բուդապեշտում անցկացվող «Նախապաշարմունքի, ցեղասպանության և հիշատակման ամառային դպրոցը»¹⁶⁴ և այլն:

Սակայն շատ գիտնականների և այս ոլորտով հետաքրքրված ուսանողների համար ցեղասպանությունների ուսումնասիրությունը միայն ինտելեկտուալ զբաղմունք չէ: Սա նաև ակտիվ գործողությունների դաշտ է: Եվ հետևաբար, ցեղասպանագետների մեծ մասն ընդունում է ցեղասպանագիտությունն՝ իբրև կիրառական գիտություն¹⁶⁵: Այս պարագայում նրանք հանդես են գալիս միջազգային դատարաններում իբրև խորհրդատուներ, համագործակցում ՄԱԿ-ի և պետական

160 Տե՛ս **Totten S.**, The State and Future of Genocide Studies and Prevention: An Overview and Analysis of Some Key Issues,

“Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 214, **Moses A. D.**, Revisiting a Founding Assumption of Genocide Studies, Genocide Studies and Prevention, N 6 (3), 2011, էջ 287:

161 Տե՛ս **Weiss-Wendt A.**, Problems in Comparative Genocide Scholarship, “The Historiography of Genocide” (ed. **Stone D.**), “Palgrave Macmillan”, 2008, էջ 60:

162 Տե՛ս <https://www.keene.edu/academics/ah/cchgs/cchgs/institute/> (մուտք՝ 14.06.2019):

163 Տե՛ս <https://www.genocidestudies.org/ghrup> (մուտք՝ 14.06.2019):

164 Տե՛ս <https://pcdnetwork.org/blogs/call-for-applications-european-summer-school-on-prejudice-genocide-remembrance-2016/> (մուտք՝ 14.06.2019):

165 Տե՛ս **Schaller D.J.**, From Lemkin to Clooney: The Development and State of Genocide Studies, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 247:

մարմինների հետ իրավիճակը բարելավելու նպատակով: Օրինակ՝ 1980-կաններին թեկնածուական աշխատանքի վրա աշխատող ուսանողներ Գրեգորի Սթենթոնի և Բեն Կիրնանի ջանքերով Յելի համալսարանում հիմնադրվեց Կամբոջայի ցեղասպանությանը նվիրված նախագիծ և դրանով փոխեց այս ցեղասպանության վերաբերյալ ամերիկյան և ընդհանրապես արևմտյան վերաբերմունքը: Այս կենտրոնի ներդրումը մեծ է նաև Կամբոջայում իրականացված հանցագործությունները քննող դատարան կազմակերպելու մասին 2004 թ. Կամբոջայի կառավարության և ՄԱԿ-ի միջև պայմանագրի ստորագրման մեջ¹⁶⁶: Հայտնի ցեղասպանագետ-իրավաբան Ուիլիամ Շաբասը (William Schabas) մասնակցել է Ռուանդայի գործով միջազգային դատարանի լսումներին, ինչպես նաև 2002-2004 թթ. եղել է Սյերրա Լեոնեի «Ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովի» երեք միջազգային անդամներից մեկը: Ամստերդամի համալսարանի պրոֆեսոր Թոն Յվանը (Ton Zwaan) փորձագիտական կարծիքով հանդես է եկել Հարավսլավիայի գործով միջազգային դատարանի առջև: Դանիացի գիտնական Մարթին Մեննեքեն (Martin Mennecke) դարձել է դանիական կառավարության ներկայացուցիչը «Միջազգային քրեական դատարանում»: Էրիկ Մարկուսենը (Eric Markusen) և Սամուել Տոթենը (Samuel Totten) ԱՄՆ պետքարտուղարության առաջարկով աշխատել են Չադում Դարֆուրից տեղափոխված փախստականների աջակցության ծրագրերում¹⁶⁷:

Ցեղասպանությունների ուսումնասիրությամբ զբաղվողները նաև ակտիվորեն ներգրավվում են քաղաքացիական իրազեկման և իրավապաշտպան արշավների մեջ: Օրինակ՝ դրանցից ամենատպավորիչը թերևս «Փրկենք Դարֆուր»-ը (“Save Darfur”) արշավն էր¹⁶⁸, որն ապարտեիդի¹⁶⁹ դեմ պայքարից հետո ամենամեծ միջազգային սոցիալական շարժումներից մեկը դարձավ¹⁷⁰: Այն ներառեց հարյուր հազարավոր ուսանողների, հասարակական-քաղաքական գործիչների, նաև հոլիվուդյան աստղերի, ինչպիսիք են Ջորջ Բլունին, Միա Ֆարրոն, ովքեր նույնիսկ կոչ արեցին բոլորտեղ Պեկինում 2008 թ. նախատեսված օլիմպիական խաղերը, քանի որ Չինաստանը չէր պատրաստվում նվազեցնել շփումները Սուդանի ցեղասպանական վարչակարգի հետ¹⁷¹: Սակայն հայտնի անձանց ներգրավումը նման արշավում նույնպես բանավեճի առարկա դարձավ: Շատերը կարծում են, որ «աստղերի» մուտքն, իհարկե, մեծացնում է հետաքրքրությունը թեմայի նկատմամբ, սակայն նրանք դա օգտագործում են սեփա-

166 Տե՛ս Stanton G., The Call, “Pioneers of Genocide Studies”, էջ 402–7, 410–11:

167 Տե՛ս Totten S., The State and Future of Genocide Studies and Prevention: An Overview and Analysis of Some Key Issues “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 222:

168 Տե՛ս <http://endgenocide.org/who-we-are/history/> (մուտքը 14.06.2019)

169 Հնչում է որպես ապարտեիդ (անգլ.՝ apartheid) մինչև 20-րդ դարի 90-ականները Հարավաֆրիկյան Հանրապետության կառավարության կողմից բնիկների նկատմամբ իրականացված ռասայական խտրականության քաղաքականություն: (Տե՛ս Louw E., The Rise, Fall, and Legacy of Apartheid, “Westport”, Praeger, 2004):

170 Տե՛ս Lanz D., Save Darfur: A Movement and its Discontents, “African Affairs”, N 108 (433), 2009, էջ 669–677, ըստ՝ Schaller D.J., From Lemkin to Clooney: The Development and State of Genocide Studies, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 247:

171 Տե՛ս Schaller D.J., From Lemkin to Clooney: The Development and State of Genocide Studies, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 247-248:

կան անձի շուրջ դրական վերաբերմունք ձևավորելու համար: Յեղասպանությունների դեմ պայքարելը և դրանց կանխարգելելուն ուղղված արշավը դառնում է նորաձև և որոշ դեպքում նույնիսկ՝ շահութաբեր: Օրինակ՝ նույն «Փրկի՛ր Դարֆուր»-ը արշավը քննադատվեց միջոցները կարիքի մեջ գտնվող դարֆուրցիներին տրամադրելու փոխարեն դրանք գերազանցապես հանրային միջոցառումների վրա ծախսելու համար¹⁷²:

Եզրակացություններ

Այսօր՝ ցեղասպանագիտության ոլորտի ձևավորումից երեսուն տարի անց, կարելի է գնահատել, թե ինչ մեծ ճանապարհ է անցել այն՝ անհատների փոքրիկ խմբի հետաքրքրությունից վերածվելով մինչև հարյուրավոր գիտնականներ և հազարավոր ուսանողներ ներառող մի ոլորտի, և ամենագրավիչ ու դինամիկ զարգացող սոցիալական գիտաճյուղերից մեկի:

Այժմ ցեղասպանագիտությունն օժտված է այն ամբողջ անհրաժեշտ ուղեկցող միջավայրով, ինչը թույլ է տալիս նրան առանձին գիտական ուղղություն կոչվել: Յեղասպանությունների վերաբերյալ գրքեր տպագրվում են աշխարհի լավագույն գրահրատարակչություններում, լույս են տեսնում թեմային առնչվող հանդեսներ, դասագրքեր, հանրագիտարաններ, քրեստոմատիաներ, ձեռնարկներ, մատենագիտություններ, անց են կացվում սեմինարներ, կլոր սեղաններ, գիտաժողովներ, գործում են կայքեր, հետազոտական կենտրոններ, թեման գտնվում է պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների ու միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Տարբեր համալսարաններ առաջարկում են դասընթացներ այս թեմայով: Տեսական շատ հարցեր գտնվում են քննարկումների և մոտեցումների ճշտման փուլում¹⁷³:

Փոխվում են գիտնականների սերունդներ, հետազոտական հնարքներ և ձևեր, ներառվում են նոր թեմաներ, վերաարժևորվում են հին հետազոտությունները: Փոփոխվում է հետազոտությունների դիտանկյունը. մեծ մակրոպատմություններին, որոնք ցեղասպանագիտության հիմքն էին, փոխարինելու են գալիս միկրոպատմությունները, որոնք թույլ են տալիս մեծ համընդհանրական նարատիվներից անցում կատարել դեպի երևույթների ավելի խորքային ուսումնասիրությունը: Եվ իհարկե, հետազոտությունների կենտրոնում մնում է կարևորագույն հարցը՝ ինչպե՞ս կանխատեսել և կանխարգելել ցեղասպանությունը՝ «մարդկությունն այդ նողկալի արհավիրքից ազատելու համար»¹⁷⁴:

172 Տե՛ս **Strom S., Polgreen L.**, Darfur Advocacy Group Undergoes a Shake-Up, New York Times, 2 June 2007, **Schaller D.J.**, From Lemkin to Clooney: The Development and State of Genocide Studies “Genocide Studies and Prevention”, 6 N (3), 2011, էջ 248:
173 Տե՛ս **Hinton A.L.**, Critical Genocide Studies, “Genocide Studies and Prevention”, 7 (1), 2012, էջ 4–15, **Straus S.**, “Destroy Them to Save Us”: Theories of Genocide and the Logics of Political Violence, “Terrorism and Political Violence”, N 24 (4), 2012, էջ 545:
174 «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիա, ըստ՝ http://www.un.org/res/un%20Treaties/III_1.pdf (մուտք՝ 14.06.2019):

Սուրեն Ա. Մանուկյան- «Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության» խորհրդի անդամ: Ուսումնասիրությունների ոլորտները՝ ցեղասպանության ոճրագործներ, համեմատական ցեղասպանագիտություն:

Ավելի քան 30 տպագրած հոդվածների հեղինակ:

manukyan.suren@gmail.com, suren.manukyan@aua.am

Summary

GENOCIDE STUDIES AS A SCIENTIFIC DISCIPLINE

History of origin and development

Suren A.Manukyan

Key words - Genocide, Lemkin, uniqueness of Holocaust, comparative genocide studies, “International Association of Genocide Scholars”, Armenian genocide, denial.

Today, thirty years after the origin of the genocide studies we can assess the exceptional role it has performed in transforming from a small group of individuals into a field that involves hundreds of scholars and thousands of students, and also is one of the most dynamic and actively growing areas of social sciences.

After the creation of the term “Genocide” by Polish lawyer Rafael Lemkin, this definition was neglected by the scholars, and only a handful of experts continued to use the term in their research. For some time the field of genocide studies was shadowed by the study of the Holocaust, which began to flourish since the mid-1960s. In the late 1970s, a group of scholars (L. Kuper, H. Fein, I. Charny, I. Horowitz) began actively to promote the study of genocides and the conference of 1982 in Tel Aviv became visible evidence of the emergence of the discipline.

The end of the Cold War and new genocides that took place in Rwanda and the Balkans drove growing interest to the subject and the development of the field. The search for mechanisms to prevent genocides has become one of the main issues of research, and prevention of genocide became a form of action and public pursuit.

Now genocide is endowed with all the basic attributes of a distinct academic field. Books about genocide are published in the best publishing houses, journals, textbooks, encyclopedias, readers, textbooks bibliographies are appearing permanently, seminars, round tables, conferences, web sites, research centers and international organizations embrace the field. Numerous universities offer courses on this topic. Several theoretical problems are considered, and new approaches are adopted.

Резюме

ГЕНОЦИДОЛОГИЯ КАК НАУЧНАЯ ДИСЦИПЛИНА

История возникновения и развития

Сурен А. Манукян

Ключевые слова – геноцидология, Лемкин, единственность Холокоста, сравнительная геноцидология, Международная ассоциация геноцидологов, Геноцид армян, отрицание.

Сегодня, спустя тридцать лет после образования геноцидологии, можно оценить, какой большой путь она проделала, превратившись из небольшой группы ученых, интересующихся этими вопросами, в научную область, включающую сотни ученых и тысячи студентов, и одну из самых динамичных и быстроразвивающихся направлений социальных исследований.

После создания польским юристом Рафаэлем Лемкиным термина «геноцид» это научное определение какое-то время оказалось вне поля интересов ученых и лишь редкие специалисты обращались к нему для использования в собственных исследованиях. Какое-то время геноцидология пребывала в тени исследования Холокоста, которое стало бурно развиваться с середины 1960-х годов. В конце 1970-х группа ученых (Л. Купер, Х. Файн, И. Чарни, И. Горовиц) стала активно продвигать тему сравнительного изучения геноцидов, и конференция 1982 года в Тель-Авиве стала явным подтверждением начала становления дисциплины.

Окончание холодной войны и новые геноциды в Руанде и на Балканах способствовали росту интереса к теме и развитию дисциплины. Поиск способов предотвращения геноцидов стал одним из главных направлений исследований ученых, а также формой активизма - общественной деятельности.

Теперь область исследования геноцида наделена всеми необходимыми для отдельного научного направления атрибутами. Книги о геноциде публикуются в лучших мировых издательствах, издаются журналы, учебники, энциклопедии, хрестоматии, учебные пособия, библиографии, проводятся семинары, круглые столы, конференции, действуют веб-сайты, исследовательские центры и международные организации. Различные университеты предлагают курсы по этой проблеме. Многие теоретические вопросы находятся в фазе дискуссий и обновления подходов.

REFERENCES

1. **Aknuni S.**, Milion mə hayeru jardi patmut'yunə, K. Polis, tp. "Y. Asaturean vordiq", 1920 **(in Armenian)**
2. **Aramayis**, Voc'irə. Mush-Sasun. Bekorner im yusheric, Bagu, tp. "Eleq N. Erevanceani", 1916 **(in Armenian)**
3. **Antonean A.**, Ayn sevi orerun... (Patkerner), Post'ən, "Hayreniq", 1919 **(in Armenian)**.
4. Cegh'aspanut'yan hancagorc'ut'yan kanxargelelu yev' patzh'elu masin konvencia **(in Armenian)**.
5. Enciklopedija Xolokost na territorii SSSR (red. Al'tman I.), M., "Rosspen", 2011 **(in Russian)**.
6. Hayoc cegh'aspanut'yun yev' haykakan harc. Grqeri matenagitut'yun (kazm. Harutyun'yan A.), Ejmias'in, 2014 **(in Armenian)**.
7. Hayoc cegh'aspanut'yun matenagitut'yun, hator A, B, Ye'r, "Girq", 2005 **(in Armenian)**.
8. **Ish'xanean B.**, Agh'eti ev tar'apanqi ashxarhic (Ayc t'jurqahay p'axstakannerin), T'iflis, tp. "Koskasi p'oxarqayi Divanatan", 1915 **(in Armenian)**.
9. Kotorac'ə Salmastum (Akanatesi patmuac'q), (kazm. Avageanc' S.), T'iflis, tp. "Hermes", t'. 6, 1915 **(in Armenian)**.
10. **Marut'yan H.**, Hayoc cegh'aspanut'yun yev' hreaneri holoqosti hishogh'ut'yan kar'ucvac'qayin ar'andz'nahatkut'yunnerə, "Patma-banasirakan handes", N 2, 2011 **(in Armenian)**.
11. **Mkrtchean E.**, T'urqioy gehenen. Hay əntaniqi mə hrash'ali p'axustə. Akanatesi patmut'yun, Aleqsandria, tp."Aram Step'anean", 1918 **(in Armenian)**.
12. **Palaqean G.**, Hay gogh'got'an. Druagner hay martirosagrut'enen. Ber'linen depi Zor., Tp. "Mxit'arean", 1922 (1914-1920, 1922) **(in Armenian)**.
13. Sovremennyye mezhdunar'odnyye otnosheniya I mirovaya politika (otv. redactor **Torkunov A.V.**), M., 2004, s.122 **(in Russian)**.